№ 122 ՈՒՐԲԱԹ 6 ՅՈՒՆԻՍԻ

1914

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ 6 ՅՈՒՆԻՍԻ № 122

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

Ներկայ յունիսի 8-ից

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ և ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ՓՈԽԱԴՐՎՈՒՄ ԵՆ ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ—Սօլօմօնօվսկայա փ., № 21, տ. Հէջուբեանի:

Съ 8-го сего Іюня редакція и контора газеты „МШАКЪ" ПЕРЕХОДЯТЪ ВЪ НОВОЕ ПОМѢЩЕНІЕ—Соломоновская ул., 21.

ԴՈԿՏՈՐ
Ա. Դ. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ
Ասիստենտ Բեռլինի համալսարանի Charité հիւանդանոցի
Շարունակում է ընդունել Գերմանիա գնացող հիւանդներին և խորհրդակցութիւններ է կազմում մասնագէտ-պրոֆեսորների հետ:
Նոր հասցէն՝ Берлинъ, Фридрихштрассе 133 а. Телефонъ Норденъ 34—69. Berlin, Friedrichstr. 133 a.
(օ. մ.) ատ. 391. 100—16

ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ և ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՒՏՐԻ
ՓԱՅՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
ՊԱՏԻՒ ՈՒՆԻ ՅԱՅՏՆԵԼՈՒ
Պ. Պ. ԳՆՈՐԴՆԵՐԻՆ, որ նա ստանալով
Ն. Ն. ԿՕՆՇԻՆ ՄԱՆՈՒՖ. ԸՆԿ.-ԻՑ ՍԵՐՊՈՒԽՕՎՈՒՄ,
Ա. ԳԻՒԲՆԵՐ ԸՆԿ.-ԻՑ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ,
ԴԱՆԻԼՈՎՍԿԻ ՄԱՆՈՒՖ. ԸՆԿ.-ԻՑ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ,
ԲԱՑԱՌԻԿ ԻՐԱՒՈՒՆՔ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԳՈՐԾՈՒԱԾՔՆԵՐԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ, ինչպէս Ռուսաստանում, նոյնպէս եւ արտասահմանում, այդ նպատակով ներկայ յունիս ամսի առաջին կեսին ընկերութիւնը բացում է Թիֆլիսում, Արմեանսկի բազարում, Զիլինգարովի շինութեան մէջ, № 73, իր ՊԱՀԵՍՏԸ:

ՑԻՐԿ
Ֆ. ԻՊԱՏՕՎԻ
Ամբողջ ցիրկը ծածկված է անթափանցիկ նոր բրէզենտով: Այսօր, ուրբաթ, յունիսի 6-ին տեղի կունենայ ձիա-մարմնամարզական խոշոր ներկայացում բաղկացած 3 բաժանմունքից և 18 համարներից: Մասնակցում է ամբողջ խումբը, նոյնպէս և՝ կին-ժօկէյ օր. Մատիլդա Վասիլեամսը: Ծօբօլեվսկի քոյրերը կը կատարեն մի շարք պարեր, այն է՝ տանգօ, ֆուրլանու, կի կա-պու և այլն: Բօզետտի եղբայրները կը խօսեն օրվայ դէպքերի շուրջը: Կը մասնակցեն նոյնպէս Ռօսսինի ընտանիքը և օր. Ի. Իպատօվա: Ներկ. վերջում կը տրվի պանտոմիմա՝ մասնակցութեամբ կօր-դը-բալէտի: Մանրամասնութիւնները ծրագիրներում:

ԲԺԻՇԿ
Մ. Կ. ՄԱՐՈՒՔԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ
Սիֆիլիս, վեներական եւ կաշուի հիւանդութիւնների:
Սրսկումն «606»-ի և «914»-ի:
Ընդունելութիւն (առ. ժ. 1—2
(եր. ժ. 5—8
Ելիզաւետինսկայա փ. № 39. տ. Ջաղէթեանի
Տէլէֆօն № 9—17.
(չ.ու.կ.) ատ. 901. 100—83

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

4 յունիսի

ՔԻՇԻՆԵՎ.—Ալէքսանդր I կայսրի արձանի բացումից յետոյ, Թագաւոր կայսրը բարեհաճեց դիմել տանուտէրերին հետեւեալ խօսքերով.

Հաղորդեցէք ձեր համագիւղացիներին Կայսրուհու և Իմ անունից շնորհակալութիւն՝ սիրոյ ու հպատակութեան համար: Ուրախ եմ, որ տեսնում եմ ձեզ, ուրախ եմ, որ այցելեցի Բեսարաբիա և ներկայ եղայ Ալէքսանդր I կայսրի մահարձանի բացմանը: Առողջութիւն եմ ցանկանում ձեզ:

Յետոյ կայսրը Կայսրուհու և Օգոստափառ Դուստրների հետ, ուղեկցութեամբ պալատի մինիստրի և շքախմբի միացած անձերի, մեկնեց ազնուականների ժողովարանը, ուր ազնուականութեան պարագլուխը դիմաւորեց, մատուցանելով աղ ու հաց և ծաղկեփունջ: Կայսրը դահլիճում անցաւ ազնուականների առաջից, արժանացնելով նրանց ողորմած ուշադրութեան: Բեսարաբիայի ազնուականութեան պարագլուխը դիմեց Նորին Մեծութեանը ողջոյնի ճառով: Թագաւոր կայսրը հաճեց ասել հետեւեալը.

Յայտնում եմ Իմ և Կայսրուհու անկեղծ շնորհակալութիւնը Բեսարաբիայի ազնուականութեանը՝ նրա սրտագին ընդունելութեան և այն ամեն զգացմունքների համար, որ այս րոպէիս լսեցինք այստեղ: Մենք երկուսս էլ բաղդաւոր ենք, որ Մեզ աջողվեց այցելել Քիշինեվը և ներկայ լինել Ալէքսանդր I կայսրի արձանի մեծահանդէս բացմանը: Յընթացս մի դարի Բեսարաբիան իրաւամբ ցոյց է տուել, որ նա սրտով կապված է Ռուսաստանի հետ և ոգեւորված է ռուսական զգացմունքով: Խմում եմ սրտանց Բեսարաբիայի ազնուականութեան և ամբողջ բեսարաբիական երկրի համար:

Կայսրի խօսքերին հետեւեցին ուժեղ ուռաներ և ազգային օրհներգի երգեցողութիւն:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Պաշտօնական: Պալատի մինիստրի հեռագիրը. «Յունիսի 3-ին կայսերական գնացքը, Ցարսկօե Սելօ դիմելիս, ժ. 3-ին ցերեկով կանգ առաւ Տիրասպոլ կայարանին մօտիկ, ուր Նորին Մեծութիւնը բարեհաճեց ընդունել զինւորական իշխանութիւններին, ազնուականութեան և քաղաքացիական ներկայացուցիչներին»:

ԱԼԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

4 յունիսի

ՎԻԵՆՆԱ.—«Կորէսպօնդենց Բիւրօյին» հաղորդում են, որ մալիսօրների հետ միաժամանակ Դուրացցօ է եկել մայօր Կրօն, որ ընդունել է զօրքերի հրամանատարութիւնը:

ՎԻԵՆՆԱ.—«Կորէսպ. Բիւրօյին» հեռագրում են Դուրացցօյից, որ սպանված ապստամբների թւում գտնվում է մի թիւրք օֆիցեր, որ շարժման գլխաւոր գործիչներից մէկն է հանդիսանում:

Ֆրանց-Յովսէփ կայսրը մի հեռագրով դիմել է Նիդերլանդեան թագուհուն, որի մէջ անկեղծ ցաւակցութիւն է յայտնում նիդերլանդեան զօրքին վիճակված կորստի համար, յանձինս Տօմսօնի:

ԱԹԷՆՔ.—«Տաբան» ռազմանաւը դիմեց դէպի Դուրացցօ:

ԴՈՒՐԱՑՑՕ (ուշացած).—Յունիսի 3-ին յարձակումը վերսկսվեց: Ապստամբները քաշվեցին լեռները: Պաշտպանողների կողմից սպանվել են մօտ 20, վիրաւորվել են մօտ 100 հոգի: Պ. Հ. Գ. թղթակիցը, շրջելով դիրքերը, ցուցակագրել է 14 սպանվածի:

Եկաւ անգլիական «Դէֆէնս» յածանաւը:

Կայացաւ Տօմսօնի հանդիսաւոր թաղումը: Սգահանդէսին մասնակցեց իշխանը, մեծ պետութիւնների ներկայացուցիչները և վերահսկիչ մասնաժողովի անդամները:

Ապստամբների կողմից եկան երկու ներկայացուցիչ, որոնք մի ժամ յետոյ մեկնեցին:

ԹԻՒՐՔ-ՅՈՒՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

4 յունիսի

Կ. ՊՕԼԻՍ.—Կայացաւ մինիստրների խորհրդի նիստի շարունակութիւնը, որ նուիրված է յոյն-թիւրքական յարաբերութիւններին, յունական նոտային պատասխան մշակելու հարցին և յոյներին Թիւրքաց հողերից գաղթեցնելու խնդրին:

ԼՈՆԴՈՆ.—Ռէյտէրը հաղորդում է, որ պատասխան նոտայում Թիւրքիան, ի միջի այլոց, կը յայտնէ, թէ յունական նոտան հանդիսանում է միջամտութիւն օսմանեան պետութեան ներքին գործերին, որը Թիւրքիան թոյլ չի տայ: Նոտայում ասվելու է նոյնպէս, որ յոյներին հալածելու տեղեկութիւնները չափազանցված են, թէ ներկայումս յոյն ազգաբնակութիւնը հանգստացել է և թիւրքաց կառավարութիւնը ներհակում է ամեն տեսակ էկսցէսներին:

ՓԱՐԻԶ.—Ֆրանսիան խորհուրդ տուեց Թիւրքիային և Յունաստանին լինել չափաւոր:

Կ. ՊՕԼԻՍ.—Զինւորական մինիստրը շտապով միջոցներ է ձեռք առնում զօրքերը կենտրոնացնելու: Մօտ 100,000 զինւոր ու ռազմամթերք ուղարկվում են արեւմտեան Թրակիա: Նաւատորմը վերանորոգվում է: Ոսկեղջիւրում ականային նաւատորմը փութանակի պատրաստվում է մեկնել Եգէյեան ծովը: Երեք ռազմանաւ ուղարկված են Զմիւռնիա:

ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ.—Երեք տեղացի մտնելով յունական նաւը, որ կանգնած էր Ալէքսանդրիայի նաւահանգստում, պոկեցին և այրեցին յունական դրօշակը: Յունաց հիւպատոսը բողոքեց տեղական իշխանութիւններին:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

4 յունիսի

ՓԱՐԻԶ.—Կառավարութեան դեկլարացիան, որ պալատում կարդաց Վիվիանին, իսկ սենատում՝ Բիենվենիւ-Մարտէնը, մատնանշում է, որ կաբինէտը պէտք է յենվի բացառապէս հանրապետական մեծամասնութեան վրա. առաջին հերթին կաբինէտը առաջ է մղում ֆինանսական դժուարութիւնների լուծումը, ընդգծում է անյապաղ փոխառութիւն կնքելու անհրաժեշտութիւնը, խոստանում է մուծել 1914 թ. բիւջէի մէջ եկամտային հարկը, իսկ 1915 թ. բիւջէի մէջ—դրամագլխի վրա նշանակված պրոգրեսիվ հարկը: Կառավարութիւնը իր գերագոյն պարտականութիւններից մէկն է համարելու արտաքին քաղաքականութեան անփոփոխ շարունակութիւնը, որպիսին ահա այսքան տարիներ իրականացնում է Ֆրանսիան և շարունակելու է դաշնակցութիւնը՝ հարուստ, բաղդաւոր հետեւանքներով ու փորձերով, բոլորած հաւասարապէս խաղաղասիրութեամբ տրամադրված երկու ժողովուրդների համակրանքով: Խօսելով Անգլիայի բարեկամութեան մասին, դեկլարացիան յայտնում է, որ Ֆրանսիան պէտք է յենվի ոչ միայն դաշնակցութեան ու բարեկամութեան վրա, այլև սեփական ույժի վրա: Երեք-ամեայ զինւորական ծառայութեան օրէնքի քննութիւնը ինքնին երկար էր ու կրքոտ, սակայն այժմ օրէնքը ընդունված է: Բայց և այնպէս նա թերի է ազգային ինքնապաշտպանութեան համար: Մինիստրութիւնը ներկայացնելու է մի շարք նոր օրինագծեր, որոնցից կարեւորագոյնները վերաբերում են երիտասարդութեան զինւորական պատրաստութեանը և պահեստի գնդերի վերակազմութեանը: Կառավարութիւնը ձգտելու է կօմպրօմիսի կէտ գտնել երկու պալատների միջև ընտրողական բարենորոգման հարցում, պաշտպանելու է ու զարգացնելու աշխարհիկ դպրոցը և առանձին հոգատարութեամբ է վերաբերվելու դէպի բանւորական օրէնսդրութիւնը:

Դեկլարացիայի այն մասի ընթերցումը, որ վերաբերում էր զինւորական 3-ամեայ ծառայութեան, առաջ բերեց թշնամական ցոյցեր սօցիալիստների կողմից, բայց ընդունվեց ծափահարութեամբ պալատի ճնշող մեծամասնութիւնից:

Տիերին և Կաշը պահանջում են վերացնել զինւորական 3-ամեայ ծառայութեան օրէնքը: Ժօրէսը ապացուցանում է, որ այդ օրէնքը թուլացնում է ազգային ինքնապաշտպանութիւնը, իսկ սօցիալիստների ծրագիրը ուժեղացնում է այն: Վիվիանին յիշեցնում է, որ պալատը ընդունեց զինւորական 3-ամեայ ծառայութեան օրէնքը, ի նկատի ունենալով հարեւան մեծ երկրի ռազմի ուժեղացումը: Վիվիանին վերջում կոչ է անում հանրապետական մեծամասնութեան՝ աջակցել գործադրելու աշխարհիկ, ֆիսկալ և սօցիալական բարենորոգումները:

Պալատը 380 ձայնով ընդդէմ 137-ի ընդունում է Բրետոնէի բանաձեւը՝ պաշտպանված Վիվիանիից:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

4 յունիսի

ՆԻԱԳԱՐԱՖՕԼՍ.—Մեքսիկայի և Միացեալ Պետութիւնների միջնորդները կորցրել են իրանց յոյսերը՝ լուծել Մեքսիկայի ներքին դրութեան վերաբերեալ հարցը, ի նկատի ունենալով, որ անհնար է համաձայնութիւն կայացնել շահագրգռված կողմերի միջև Մեքսիկայի ժամանակաւոր պրեզիդենտի նկատմամբ:

ԹԷՀՐԱՆ.—Մօհամերից հաղորդում են, որ «Անգլօ-Պերսիէն-Օյլ-Կօմպանին» եռանդուն պատրաստութիւններ է տեսնում նաւթի խողովակ կառուցելու Ախվազից: Այդ ընկ., որ կօնցեսիայի իրաւունքը ստացել է շահի կառավարութիւնից, այժմ անգլիական վարչութիւնից $2^1/_2$ ֆունտ նպաստ է ստացել իր գործունէութիւնը ընդարձակելու և Հնդկաստանի անգլիական նաւատորմին նաւթ մատակարարելու համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Բարձրագոյնս շնորհակալութիւն է յայտնված Տաւրիկեան նահանգապետ Լաւրինօվսկիին այն կարգ ու կանոնի համար, որ նա ցոյց տուեց Նորին Կայսերական Մեծութիւնների Սիմֆէրօպօլից և նահանգի մի քանի գաւառներից անցնելու ժամանակ:

ԲԱԹՈՒՄ.—Յոյները խմբերով Կովկաս են վերադառնում: Սալօնիկից արդէն եկել են մի քանի կողոպտված և հիւանդ ընտանիքներ:

ԴՐԵԶԴԵՆ.—Ռուսաստան մեկնեց սակսօնական թագաւորը:

ԼԻԲԱՒԱ.—Կալանաւորվեց Նիւ-Եօրկից եկած ատամնաբոյժ Շօլենց, որ մեղադրվում է Վարշավայում 150,000 ռուբլու թանգարժէք իրեր գողանալու մէջ:

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Առաւօտեան Սազօնօվը և ռումինական մինիստր-նախագահ Բրատիանուի հետ՝ շքախմբով ու յատուկ գնացքով ժամանեցին Պրեաու, ուր նրանց դիմաւորեցին ռումինական և վենգերական իշխանութիւնների ներկայացուցիչները: Երկու մինիստրը շքախմբով դրօսանք կատարեցին:

ՉԵՐՆՕՎՑԻ.—Ուկրայնցիների միտինգում ընդունվեց Լվօվում ուկրայինեան համալսարան հիմնելու բանաձեւ:

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Թագաւոր կայսրը Բրատիանուին շնորհեց Ալէքսանդր Նեվսկու շքանշան, երեք մինիստրի՝ Սպիտակ Արծուի, միւսներին՝ Աննայի առաջին աստիճանի շքանշան:

ՌԻՎԷԼ.—Եկաւ անգլիական նաւատորմը, բաղկացած վեց ռազմանաւից: Քաղաքը զարդարված է դրօշակներով: Ռուսաց նաւատորմը ծովակալ Հէսսէնի հրամանատարութեամբ կանգնել է երկու շարքով: Ժամը 2 ու 30 ր. երևաց անգլիական նաւատորմը:

ԶՈՒԳԴԻԴԻ.—Ինգուր և այլ գետերի վարարումից ոչնչացել են աւելի քան 5000 դեսեատին ցանքս: Գաւառում խեղդվել են 8 հոգի:

ՊՐԱԳԱ.—Չեխական լրագիրները ուրախութեամբ ընդգծում են Կօնստանցայում տեղի ունեցած տեսակցութեան հետեւանքները, գտնելով, որ նա նշան կը ծառայէ երրեակ զինակցութեան թուլութեան և սլաւօնիզմի նշանակութեան ուժեղացման:

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Ռումինական մամուլը, ինչպէս անկուսակցական, այնպէս և բոլոր գլխաւոր քաղաքական կուսակցութիւնների, բուռն ողջոյնի յօդուածներ է նուիրել Նորին Կայսերական Մեծութիւնների Ռումինիա այցելելուն:

ԼՈՆԴՈՆ.—Ռազմիկ սուֆրաժիստուհիների շարժումը, որի դէմ եռանդով պայքարում է ոստիկանութիւնը, լուրջ դիմադրութեան է հանդիպում նոյնպէս փողոցային ամբոխի կողմից: Ոստիկանութիւնը յայտնագործեց դաւադրութիւն, որի նպատակն էր պայթեցնել Վուլվիչի ջրանցքը: Սուֆրաժիստուհիների միտինգներին հռետորները խիստ դարձւածքներ են գործածում անգամ թագաւորի հասցէին, որով աւելի են ուժեղացնում հասարակութեան բոլոր խաւերում տիրող դժգոհութիւնը սուֆրաժիստուհիների դէմ:

ԲԱԳՈՒ.—Նաւթահանքերի բանւորների գործադուլը մեղմանում է: Աշխատանքի ձեռնարկեցին մօտ 2000 բանւոր, գլխաւորապէս մանր ֆիրմաներում: Բալախանում զինված ընդհարման դէպք է եղել գործաթող և աշխատելու կամք յայտնած բանւորների միջև. ընդհարման մէջ սպանվել է մէկը, մեկն էլ վիրաւորվել է:

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ.—Տեղացի հարուստներ

Ջերաչեվը և տ. Կարապուլովան նուիրեցին առաջինը՝ հայ դպրոցի կառուցման համար 60,000 րուբլի, երկրորդը՝ հայ հասարակութեանը 60,000 րուբլի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Սիկորսկին «Իլյա Մուրոմեցով» սահմանեց համաշխարհային մրցակէտ, բարձրանալով 2000 մէտր 10 ճանապարհորդի հետ 1 ժամ 26 րոպէ 11 վայրկեան։

ԿՐԱՍՆՕԵԱՐՍԿ.—Աչինսկի մօտերը ոստիկանութեան ու աւազակների միջև սկսված հրացանաձգութեան ժամանակ վիրաւորվեցին երկու զինուոր և սպանվեցին հինգ աւազակ, իսկ վեցերորդը ձերբակալվեց։ Բոլոր չարամիտները կովկասցիներ են։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ.— Ի պատիւ միջազգային կոնգրէսի տրված խնձոյքից յետոյ, կոնգրէսի անդամները մեկնեցին Կօպէնհագէնից։

ԲԵՐԼԻՆ.—Տեղի ունեցաւ հայ-գերմանական ընկերութեան հիմնադիր ժողովը, որ գումարել էին Գերմանիայի յայտնի հասարակական գործիչներ։

ԼՈՆԴՈՆ.— Րէյտերի տեղեկութիւնների համաձայն, անգլօ-գերմանական համաձայնութիւնը կը ստորագրվի Ֆրակկի փաշայի հետ սկսված բանակցութիւնները վերջացնելուց յետոյ։ Համաձայնութիւնը վերաբերում է Տիգրիսի վրայով նաւարկելուն, Միջագետքի ոռոգման, Բաղդադի երկաթուղուն և ապագայ երկաթուղագծերի նախագծին։ Թիւրք-բրիտանական բանակցութիւնները կը վերջանան յուլիսին։ Կօնվենցիան վերաբերում է թիւրք-պարսկական սահմանագլխի հարցին։

ՌԵՎԵԼ.—Ռուսական և անգլիական նաւատորմները իրար հանդիպելու ժամանակ հնչեցին ռուսական և անգլիական օրհներգը։ Երբ անգլիական նաւատորմը խարիսխ ձգեց, նրա վրա երևաց ռուսական դրօշակ և սարքեցին 21 թնդանօթ։ Իր հերթին «Ռիւրիկը» բարձրացրեց անգլիական դրօշակ և նոյնպէս 21 թնդանօթ պարպեց։ Անգլիական նաւերն անցան ռուսական օֆիցէրներ՝ հիւրերին ողջունելու համար։ Ծովակալները փոխ-այցելութիւն արին իրար, յետոյ ռուսական և անգլիական նաւատորմների հրամանատարները փոխ-այցելութիւններ կատարեցին նահանգապետի և փոխ-նահանգապետի հետ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿՈՒՐՍԸ

Նոր ու վտանգաւոր հարուած է սպառնում ռուսական ժողովրդատնտեսութեան։ Հարուածը ուղղված է անմիջապէս խոշոր առևտրի և արդիւնաբերութեան դէմ, ուր ձեռնարկութեան ամենատարածված և ընդունված ձևը կազմում է ակցիօներական ընկերութիւնը։

Ինչի մէջ է կայանում տնտեսական քաղաքականութեան այդ նոր ու վտանգաւոր, կարող ենք ասել՝ աւերիչ ու քայքայիչ կուրսը։

Ակցիօներական ընկերութիւնների հողատիրական նորման (քաղաքից և այլ բնակավայրից դուրս) հասնում է սովորաբար 200 դեսեատինի։ Աւելի ընդարձակ ծաւալ ձեռք բերելու համար անհրաժեշտ է յատուկ դիմումն մի քանի մինիստրութիւնների՝ սովորաբար երեք և երբեմն չորս (առևտրի և արդիւնաբերութեան, ներքին գործերի, երկրագործութեան և զինուորական մինիստրութիւններին)։

Մի կողմ թողնենք այն հարցը, թէ ինչպիսի ձգձգումների և խոչընդոտների է ենթարկվում ամեն մի նման դիմում այնպիսի մի երկրում, ուր կենտրոնացման սիստեմը և բիւրօկրատական րէժիմը շարունակում են տակաւին գերագոյն խնամակալի դերը խաղալ, կաշկանդելով հասարակական ազատ ինիցիատիվի և ինքնագործունէութեան բոլոր ձգտումները։ Վերջին ապացուցեց նորութիւնը, որով նոյն այդ րէժիմը աւելորդ անգամ աշխարհին ցոյց տուեց իր յետադարձ քայլերի անուղղելի կամքը, կազմում է այն, որ նա «հրէական հարցը» բացառիկ պայմանների մէջ դրեց նոյնիսկ ակցիօներական ընկերութիւնների մէջ. այնտեղ, ուր խոշոր կապիտալն է միայն իշխողը՝ իր չափաւոր ու լօյեալ ներկայացուցիչներով հասարակական մտքի ու քաղաքական գիտակցութեան սահմաններում. այնտեղ, ուր հրէական տարրը (իր անձնական և առարկայական իմաստով) խոշորագոյն ֆակտորի դերն է խաղում ռուսական էկօնոմիկայի մէջ։

Ի՞նչ է ասում այդ կուրսը։

Հրէաներին արգելվում է մուտքն ու մասնակցութիւնը այն բոլոր ձեռնարկութիւնների վարչական կազմի մէջ, որոնք ստանում են անշարժ հողեր ձեռք բերելու իրաւունք՝ հրէաներին բնակվելու թոյլատրված գաւառներից դուրս։ Այլ դէպքերում (այսինքն հրէաբնակ վայրերում գտնվող ընկերութիւնների մէջ) վարչութեան մէջ մասնակցող հրէաները իրաւունք չունեն փոքրամասնութիւնից գերազանցել և ոչ էլ կարող են առհասարակ դիրեկտորներ, ղեկավարներ լինել ընկերութեան պատկանող կալուածների վրա։

Ահա տնտեսական քաղաքականութեան նոր կուրսի ողջ ուղին ու ծուծը։

Առաջին հայեացքից թւում է երևի ամեն մի պրօֆանի, որ նման մի կարգադրութիւն մասնաւոր և սահմանափակ բնաւորութիւն ունի և թեթևակի միայն կարող է շօշափել գոյութիւն ունեցող և յետագայում հիմնվելիք ընկերութիւնների վարչական կազմը նախորոշելու իմաստով, առանց զգալի դեպրեսիաներ գործելու ռուսական ժողովրդատնտեսութեան վրա առհասարակ։

Սակայն բոլոր նրանք, որոնք գէթ հարևանցիօրէն գիտեն, թէ ինչ նշանակութիւն ունի և, որ գլխաւորն է, ինչ աւերիչ հետևանքներ է սպառնում տնտեսական առաջխաղաց գործունէութեան որևէ ազատութիւն խանգարող արգելք, կը խոստովանեն նոր կուրսի վտանգաւոր հարուածի ոյժը, եթէ այն, իրապէս, մինչև վերջ գործադրվի հետևողականօրէն։

Դեռ միայն կառավարական կարգադրութեան լուրը լսելուն պէս յուզվել, աղմկել է անսովոր շուարումներով առևտրա-արդիւնաբերական զսպանակների կենտրոնական բարօմետրը՝ բօրսան, ցածրացնելով զանազան արժէքների գները, իսկ արտասահմանում ընկնելով ռուսական րուբլու կուրսը։ Կիևի րայօնի շաքարի արդիւնաբերութեան, Դոնի և Լեհաստանի շրջանի երկաթագործական և քարածխային ձեռնարկութիւնների մէջ, որտեղ խոշոր չափերով հրէական կապիտալ է թափված, ուժեղ տագնապ է առաջացրել։ Եւ մէկը միւսին լրացնող կարծիքները՝ առևտրա-արդիւնաբերական և ֆինանսական կօմպետենտ շրջաններից՝ ցոյց են տալիս, թէ ինչպիսի վտանգաւոր խաղ է խաղում տիրող րէժիմը, երբ նա յետադէմ նացիօնալիզմի իր խտրական քաղաքականութիւնը հասցնում է մինչև խոշոր կապիտալի ազատ մրցութեան սահմանները։

Հրէաները իրանց ձեռներէցութեամբ խաղացել են և շարունակում են խաղալ հսկայական դեր Ռուսաստանի հարաւ-արևմտեան երկրամասի արդիւնաբերական կեանքում։ Նոր (խոչընդոտող) կանոնները, վերացնելով հրէաների մասնակցութիւնը, բոլորովին պիտի դադար տան նոր ձեռնարկութիւններ առաջ գալու գործին։ Հրէաները կը դադարեն այլ ևս գործի դնել իրանց կապիտալը, որովհետև նրանց համար այլ ևս միտք չունի կրել այնպիսի ձեռնարկութիւնների ռիսկը, որոնց վրա նրանք տէրեր լինելու իրաւունք չունեն և ոչ էլ կառավարիչ կարող են լինել։ Միւս կողմից վատթարանում է նաև քրիստոնեայ արդիւնաբերողների դրութիւնը. որովհետև սահմանափակումները նուազեցնում են այն անձանց թիւը, որոնց կարելի է գրաւել ակցիօներական ընկերութիւնների մէջ մասնակցելու համար։ Այսպէս է արտայայտվել պետական բանկի Կիևի բաժանմունքի կառավարիչը, յայտնի ֆինանսիստ Գ. Աֆանասևը։ Առհասարակ ես հրաժարվում եմ հասկանալ արդիւնաբերական սահմանափակումների իմաստը,—աւելացրել է նոյն պետական պաշտօնեան։

Ֆրանսիայի յայտնի տնտեսագէտ և վաղեմի մինիստր Ի. Գիւյօ, «Annales Economiques» հանդէսի խմբագիրը, ապշել է ուղղակի ռուսական նոր տարօրինակութեան վրա, որ «արդիւնաբերական ազատ մրցութիւնների» գործը կաշկանդում են «ուլտրա-նացիօնալիստական տենդենցների նման փորձերով»։ «Ինձ հասել են նոյն իսկ տեղեկութիւններ, որ երբ կառավարութիւնը ուզում է նման սահմանափակումներ մտցնել նաև փոխառութեան մէջ»։ «Սպանիան,—վերջացրել է Գիւյօն իր զրոյցը «Рус. Слово»-ի թղթակցի հետ,—իր ժամանակին էլ աւելի արմատական միջոցներով հալածել է երկրից մաւրերին և հրէաներին։ Եւ ինչ ենք մենք տեսնում։ Վաղեմի հարուստ երկիրը, ծաղկած առևտուրն ընկնում, սպառվում են։ Այդպիսի օրինակները պիտի դասեր ծառայեն նրանց համար, որոնք դիմում են նման փորձերի»։

Թէ ինչ կարծիք ունի ֆրանսիական հռչակաւոր տնտեսագէտ պրօֆ. Պօլ Լէրուա-Բօլիէն, «Economiste Française»-ի խմբագիրը, հրէաների տնտեսական նշանակութեան մասին ռուսական ժողովրդատնտեսութեան համար, թող վկայ ծառայեն նրա հետևեալ խօսքերը։

«Ռուսական հրէաների վիճակով շատ է զբաղվել իմ հանգուցեալ եղբայրը՝ սօցիօլօգ Անատօլ Լէրուա-Բօլիէն։ Իր յայտնի գրքում նա ցոյց է տալիս, թէ ինչպիսի դեր է խաղում Ռուսաստանում անտիսեմիտիզմը։ Որպէս տնտեսագէտ՝ ես պէտք է համաձայնվեմ սօցիօլօգի հետ։ Ռուսաստանը դեռ երկար կարիք ունի արտասահմանեան կապիտալի՝ իր բնական հարստութիւնները մշակելու համար։ 1914 թ. Ռուսաստանում մտցվել են մի քանի սահմանափակումներ հրէաների համար առևտրի և արդիւնաբերութեան սահմաններում, և այդ հանգամանքը առանց խոր ազդեցութեան չէ անցել երկրի տնտեսական բարգաւաճման վրա։ Յետադարձ քայլերը դէպի հինը միայն վնասակար կարող են լինել։ Ազատ շարժման ու գործողութեան սովոր արտասահմանեան կապիտալը հանդիպելով ոստիկանական բնոյթ կրող պատնէշների, կասկած չը կայ, սիրով չի ներգաղթի այլ ևս Ռուսաստան։ Բացի դրանից, այդպիսի մի կարգադրութիւն ընդունակ է միայն դադար տալ երկրում ներքին արդիւնաբերութեան։ Վերջերս հանդիպել եմ ես շատ ռուս խոշոր կալուածատէրերի, որոնք պատմում էին ինձ, թէ որքան վնաս են հասցնում առևտրին ու արդիւնաբերութեան բոլոր կարգի ճնշումները։ Ի հարկէ նոր կարգադրութիւնը ևս մօտիկ ապագայում կարտայայտէ իր բացասական կողմերը»։

Տնտեսական շրջերի տեսակէտից մի այնպիսի հեղինակաւոր մարմին, ինչպիսին բովանդակ Ռուսիայի խոշոր արդիւնաբերութեան և առևտրի ներկայացուցիչների խորհուրդն է Պետերբուրգում, արտայայտվել է իր վերջերս տեղի ունեցած համագումարի մէջ միանգամայն բացասաբար ընդդէմ նոր կառավարական կուրսի։ Եւ առևտրի ու արդիւնաբերութեան մինիստր Տիմաշևի ճառը ոչ միայն չէ համոզել խոշոր կապիտալի մագնատներին, այլ և առիթ է տուել ամենախիստ, ոմանց կողմից նոյնիսկ յարձակողական քննադատութեան, սկսած խորհրդի նախագահ (միաժամանակ Պետական Խորհրդի անդամ) Աւդակովից մինչև Մօսկվայի, Պետերբուրգի և Լեհաստանի ամենախոշոր և ազդեցիկ արդիւնաբերողները։

«Կառավարութիւնը պէտք է փոխէ իր ներքին քաղաքականութեան կուրսը։ Մեր մեծ Ռուսիան կառավարվում է չափազանց երեխայաբար»—յայտարարել է խոշոր գործարանատէրերից մէկը։

Առևտրա-արդիւնաբերական բաւական աղմկալից համագումարը ընդունում է ակցիօներական ընկերութիւնների դէմ ուղղված նոր կառավարական կուրսի մասին հետևեալ որոշումը.

«1) Մինիստրական խորհրդի նոր կանոնները ուժեղացնում են այն սահմանափակումները, որոնք մինչ այժմ տեղի էին ունենում մինիստրական խորհրդի սովորական պրակտիկայով ակցիօներական գործերի վերաբերեալ։

«2) Սահմանափակումների այդ ուժեղացումը հանդիսանում է մի անմիջական խոչընդոտ երկրի արդիւնաբերական ոյժերի զարգացման դէմ և սպառնում է լուրջ հետևանքներ ընդդէմ ռուսական արդիւնաբերութեան՝ զգալի չափերով դժուարացնելով անհրաժեշտ կապիտալի ներհոսումը դէպի մեր երկրի արդիւնաբերութեան ճիւղերը»։

Ի նկատի ունենալով այդ բոլորը, համագումարը յանձնարարում է խորհրդին խնդրագրով դիմել նախ մինիստր-նախագահին և առևտրի ու արդիւնաբերութեան մինիստրին։ Հակառակ դէպքում, եթէ հետևանք չունենան այդ խնդրագրերը, անմիջապէս դիմել Կայսրին։

Բնորոշ փաստի հանդէպ ենք կանգնած մենք։

Առևտրա-արդիւնաբերական խոշոր բուրժուազիան, որ գիտէ այնքան լաւ ու համբերատար հանդիսատես լինել ի վերուստ չարամիտ թվող բազմաթիւ զուտ քաղաքական կուրսերին, ներկայիս յուզվում, տրտնջում է տիրող րէժիմի ներկայացուցիչների դէմ, որովհետև նոր կուրսը զուտ տնտեսական՝ առևտրա-արդիւնաբերական է և որպէս այդպիսին՝ դիպչում է անմիջապէս կապիտալի մագնատների ուռած գրպաններին։ Եւ որովհետև կապիտալի ծաւալման և շահագործութեան ինտերեսները չեն ճանաչում ոչ հայրենիք և ոչ ազգային խտրութիւն, ուստի բնական է միանգամայն, որ ռուս բուրժուազիան ամենայն փութկոտութեամբ իր պաշտպանութեան տակ է առնում դասակից հրէայ բուրժուազիային, որը յարաբերաբար (տոկոսաբար) աւելի ուժեղ դիրքեր ունի արդիւնաբերական կեանքում, քան իշխող ազգի բուրժուազիան։

B. Intimus

ԺԱՆՏԱԽՏԸ ԵՒ ԲԱԳՈՒԻ ԲԱՆՒՈՐՈՒԹԻՒՆԸ

II

Ժանտախտն է գրգապատճառը, եթէ այսօր Բագւում բռնկվել է գործադուլային շարժումը։

Լրագրական ու մասնաւոր տեղեկութիւնները հարևանցի կերպով ակնարկներ են անում այդ մասին։

Ճիշդ է, ժանտախտը չէզոքացվեց, կանգ առաւ, հիւանդներից շատերը մեռան, միւսներն էլ առողջացան։

Անկասկած է և այն, որ, ինչպէս նոյն Հեռագրական Գործակալութիւնն է ասում, Թիւրքենդում այլ ևս ժանտախտի դէպքեր չեն եղել վերջերս ու գիւղը օղակող զօրագունդն էլ վերացրել է շուրջկալն ու հեռացել արդէն։

Բայց ինչ երաշխաւորութիւն, որ նա չի բռնկվի նոր ոյժով հէնց մօտ ապագայում։

Եւ ո՞վ կարող է ասել, թէ չի դուրս գայ նա իր չէզոքացման կէտից և խուժի նաւթահանքերը համաճարակ սփռելու։

Չը կայ ոչ մի երաշխաւորութիւն։

Թէև ձեռք են առնված եռանդուն միջոցներ ու խոշոր գումարներ են յատկացված նրա դէմ կռիւ մղելու համար, այնուամենայնիւ սպառնալիքը կայ այսօր, կը մնայ և վաղը։

Արդիւնաբերողը, գործարանատէրը, հարուստը կարող է մի կերպ գլուխն ազատել վտանգից։

Իսկ ինչ անի բանւոր մասսան, նա, որ ամենից աւելի կարօտ է ապահովութեան այդպիսի դէպքերում՝ իր անբարեկարգ վիճակի շնորհիւ։

Բնական է, որ սարսափի տակ զգայնութեան նշաններ ցոյց տայ նա և, ինքնապաշտպանութեան բնազդից դրդված, ճիչ արձակի, ապահովութեան պահանջ առաջադրի, իր վիճակը անձամբ տնօրինելու քայլեր անի։ Այդպէս էլ վարվում է Բագուի բանւորութեան գիտակից մասը, քարշ տալով իր ետևից մասսան։

Նկատի առնելով ժանտախտի սպառնալիքը, տեղական կազմակերպված բանւորութիւնը յարուցել է մի շարք պահանջներ այդ ուղղութեամբ և դրանց մէջ գլխաւոր տեղը, եթէ չասեմ ամբողջովին, բռնում է սանիտարական հսկողութիւնը արդիւնաբերական շրջաններում բանւորական ներկայացուցիչների մասնակցութեամբ և առողջապահական յարմարութիւններով բնակարաններ պատրաստելը։

Իսկ ամենից էականը, որ ընդգծված է այդ պահանջների թւում, ու իբրև միակ նպատակայարմար միջոցը համաճարակային արհաւիրքներից բանւորութիւնը ազատելու համար, բանւորական գաղութների խնդրի լուծումն է։

Այդ պահանջների առաջադրողը եղել է Բագուի նաւթարդիւնաբերական բանւորների պրօֆէսիօնալ միութիւնը։

Իր վարչութեան միջոցով նա դիմել է այդ մասին նաւթարդիւնաբերողների խորհրդին։

Ըստ երևոյթին՝ բանւորութեան առաջադրած այդ պահանջները կամ մնացել են անպատասխան կամ չեն յարգված։

Քանի որ Բագուի բանւորութեան մի քառորդ մասը և Բիբի-Էյբաթի շրջանի 22 ձեռնարկութիւններ գործադուլ են յայտարարել։

Իսկ, ըստ հեռագրական գործակալութեան ուշացած տեղեկութեան, միայն 10,000 բանւոր։

Ի՞նչ չափեր կը ստանայ այդ շարժումը։

Գուշակել, ի հարկէ, դժուար է։

Թւում է, որ բանւորութեան պահանջներն այն չափով, որչափով նրանք վերաբերում են սանիտարական հսկողութեանը մասնակցելուն և, մանաւանդ, բնակարանային կամ բանւորական գաղութների հարցին, արդարացի են։

Որքան յիշում եմ, Բագուի նաւթարդիւնաբերողները դեռ 1907 թւին այդ պահանջին ընդառաջելու տրամադրութիւն ցոյց տուին։

Մինչև իսկ այդ նպատակով յատկացվեց յայտնի տարածութիւն գետնի, որոշ գումար, կազմվեց պրօեկտ բանւորական գաղութները էլեկտրաքարշ հաղորդակցութեամբ նաւթահանքերի հետ միացնելու...

Ամբողջ 7 տարի է անցել վրայից. այդ որոշումներից ու պրօեկտներից մնացել են լոկ յիշողութիւններ։

Զարմանալի չէ բնաւ, եթէ այդ յիշողութիւնները նորից արծարծվում ու յարութիւն են առնում այսօր ժանտախտի սպառնալիքի ներքոյ։

Թւում է ինձ, որ Բագուի բանւորութեան ներկայ շարժումը առ այժմ այդ առանցքի շուրջն է պտտւում։

Մնացեալ պահանջները սովորական դարձած կրկնութիւններ են՝ բանւորութիւնը ձգտում է հասնել նրանց, և, քանի որ դեռ մնում են անիրագործելի, առաջադրում է ամեն մի նոր դէպքում՝ հերթական նորերի հետ միասին։

Աշխատակից

ՌՈՒՍԱՀԱՅ ԹԵՄԵՐԻ ԱՒԵԼԱՑՄԱՆ ՇՈՒՐՋԸ

I

Ռուսահայ թեմերի աւելի քան անհրաժեշտ աւելացման և փոփոխութեան ենթարկելու ծրագիրը իր լուրջ և նշանակալի դրութեամբ ինչպէս պարբերական մամուլի, նոյնպէս և գաւառական հայ ազգաբնակութեան համար մի մեծ խնդիր է և խօսակցութեան առարկայ։

Այլ կերպ էլ չէր կարող. եթէ մէկը իր իսկ կաշուի վրա զգացել է իր բնակավայրից թեմի հեռաւորութիւնը, նրա հետ կապված և գոյութիւն ունեցող գործառութեանց ձգձգումը, այն էլ տասնեակ տարիներ շարունակ, և եթէ հայ գաւառացին իր որդուն տեղափոխել է թեմական դպրոցը, որը 100-աւոր վերստերով իր գիւղից հեռու է ընկած, և տարիների ընթացքում դիտել է իր դրամական մեծամեծ ծախքերը, ի հարկէ, այդպիսի մարդն ինչի նման կը լինէր, եթէ իր հեռաւոր և միևնոյն ժամանակ ընդարձակ վիճակը թեմի վերածելու խնդիրը չը բարձրացնէր։

Զանգեզուրը, իր Տաթևի վիճակով, ամբողջ Կովկասում իր աշխարհագրական դիրքով, կենտրոնական քաղաքներից միանգամայն կտրված լինելով և ընդարձակ գիւղերով եզակի մի շրջան է կազմում, որի ամեն մի անհատի համար թեմի և նրա հետ կապված դպրոցի գոյութեան հարցը մի կարևոր, լուրջ և հրատապ բնոյթ կրող խնդիր է։ Մեր ոչ մի շրջանը չէ կարելի համեմատել նրա հետ։ Եւլախի երկաթուղին մեզնից հեռու է մօտ 180 վերստով, համարեա այդքան էլ Թիֆլիս-Ջուլֆայի գիծը։ Ինչ վերաբերում է գաւառիս 90 հայ և 100-ի չափ թուրքական գիւղերի ներքին հաղորդակցութեան, այդ գտնվում է աննախանձելի և անմխիթար դրութեան մէջ։

Եւ հէնց այդ բոլորը, ևս առաւել դպրոցների սուղ լինելը, կրթականի մեծ պակասը, որ ունի Տաթևի վիճակի երեք շրջանները ի նկատի առնելով՝ մենք տեղեկացանք, որ Սիսիանի 19 և Զանգեզուրի 15 գիւղերը առանձին առանձին խնդրագրեր են պատրաստում Վեհափառ Կաթողիկոսի անունով և խնդրում Տաթևի ընդարձակ վիճակը վերածել թեմի և տալ հնարաւորութիւն շրջանումս մեր մի շարք՝ թեմի հետ կապված պակասները ուղղելու և գաւառումս ստեղծելու ինտելիգենտ ոյժերի մի շարժուն խումբ, որոնց գոյութիւնը անուրալի օգուտներ կը տայ ապագայում Զանգեզուրում, որի՝ շատ թէ քիչ ուսման հոտ առնողը թողնում-հեռանում է և երես թեքում իր բնիկ օջախից։

Եւ եթէ մենք հեռուից անգամ դիտելու լինենք Տաթևի վիճակը, տեսնելու ընդունակութիւն ունենանք նրա 90 հայ գիւղերի մօտ 100,000 ազգաբնակութեան ագիտութիւնը, երկրի ամեն տեսակի ձեռնարկութեան կարօտ լինելը, մենք կասենք, այո, վերջին տարվայ մեզնում գոյութիւն ստացած և գործադրվող եկեղեցական, կրթական բարեկարգութեամբ հանդերձ, իրաւ է, Տաթևի վիճակը թեմի վերածելու վիճակներից առաջինը պէտք է համարել և ամենից անհրաժեշտ շրջանը։

Գորիս Սաղանդարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Ֆինանսների մինիստրի մայիսի 9-ին տուած ամենահպատակ զեկուցման հետևանքով, Թագաւոր Կայսրը բարեհաճեց հրամայել շնորհակալութիւն յայտնել գաղտնի-խորհրդական Ս. Ի. Գուլիշամբարեանին, որա «Экономическій обзоръ туркестанскаго района, средне-азіатской желѣзной дороги» աշխատութեան համար։

◆ Ինչպէս յայտնի է, Թիֆլիսում կազմակերպվել է որբերին և այրիներին խնամող մի ընկերութիւն։ Այս օրերս այդ ընկ. անդամների ժողովում, ընկ. նախագահ ընտրվեց փոխարքայի զինուորական մասի օգնական Ա. Զ. Միշլաևսկին։ Իսկ երէկ բացվեց ընկ. որբերի և այրիների ապաստարանը։ Ընկերութիւնը նպաստում և օգնում է առաւելապէս ռուս այրիներին և որբերին։ Մասնաւոր դէպքերում նա օգնութեան է հասնելու և միւս ազգութիւններին պատկանող թշուառներին։ Ընկ. օգնելու է նաև շատ շատերին պաշտօն գտնելու, որոնց երեխաներին տեղ է տալու ապաստարանում, որոնց մտցնելու է որևէ դպրոց, ծախսերը իր վրա վերցնելով։ Ընկերութեան անդամների մէջ կայ բժիշկ, որ ամենայն պատրաստակամութեամբ բժշկելու է այն անձանց, որոնք այդ բանի համար կը դիմեն ընկերութեան։ Ապաստարանում առ այժմ կան պառաւ այրիներ։ Ապաստարանը ապագայում ընդարձակվելու է։

◆ Սոցիալական գործի կովկասեան կոմիտէտը կազմել է մի յանձնաժողով Անդրկովկասը հետազօտելու համար։ Դրա հետ միասին կոմիտէտը խնդրել է Կովկասի մի շարք ընկերութիւնների և կօմիտէների յանձնաժողովի համար իրանց կողմից ներկայացուցիչներ նշանակել։ Բօրսային կօմիտէտը իր կողմից ներկայացուցիչ է նշանակել իր անդամ Ս. Ս. Էնֆիաջեանցին, իսկ Կայսեր. Կովկ. Բժշկական Ընկ. կողմից ներկայացուցիչ է նշանակվել բժիշկ Բոժովսկին։

◆ Այս օրերում կայացաւ Թիֆլիսի նահանգական ատեանի նիստը, մասնակցութեամբ Միքայէլեան հիւանդանոցի և Որբերի դատարանի հրաւիրված ներկայացուցիչների, քննելու համար նորերս վախճանված թիֆլիսեցի վաճառական Նարիմանեանի եղբօր հարցը, որին հանգուցեալը ամբողջ 25 տարի խնամակալութեան պատրուակի տակ պահում էր Միքայէլեան հիւանդանոցում, օգտվելով նրա ժառանգական իրաւունքներից։ Նահանգական ատեանը յիշեալ «խելագար» Նարիմանեանին, երկար քննութիւնից յետոյ, գտաւ միանգամայն նորմալ և որոշեց վերականգնել նրան իր օրինական իրաւունքների մէջ հանդէպ հանգուցեալ եղբօր ժառանգների։

◆ Յունիսի կէսերին Կովկասի զինուորական շրջանի շտաբի դիւանատունը փոխադրվում է Կոջոր։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 8-ին, մեշչանների վարչութեան շէնքում, կը կայանայ մեշչանների լիազօրների ժողովը, որ համարվելու է օրինական, ժողովականների որքան թիւ էլ լինի։

◆ Վաղը, շաբաթ, ամսիս 7-ին, նշանակված է Ուսուցչական Միութեան տարեկան ընդհ. ժողով՝ Գայեանեան դպրոցում, առաւօտեան ժամը 11-ին։

◆ Միացեալ Պետութիւնների երկրագործական դեպարտամենտը դիմել է Թիֆլիսի բուսաբանական այգու վերատեսչին, խնդրելով ուղարկել իրան Անդրկովկասի չոր վայրերում աճող բոյսերի և ծառերի սերմ, Ամերիկայում ցանելու համար։

◆ Մեծ-Ղարաքիլիսայի ծխական դպրոցի VI բաժ. ընթացաւարտները ուսուցչական կազմի ղեկավարութեամբ յունիսի 3-ի երեկոյեան էկսկուրսիայով ժամանեցին Թիֆլիս։ Էկսկուրսանտները քաղաքում մնալու են 4—5 օր, որի ընթացքում որոշված է այցելել. 1) շերամապահական և մետաքսագործական կայարանները, 2) բուսաբանական այգին, 3) սպանդանոցը, 4) մանկավարժական թանգարանը, 5) զինուորական թանգարանը, 6) Ներսիսեան դպրոցի նոր շէնքը, 7) մի քանի գործարաններ, 8) քաղաքային ջրանցքը և այլն։ Ընթացաւարտները, բացառութեամբ երկու-երեքի, առաջին անգամն են տեսնում Թիֆլիսը, իսկ շատերն առաջին անգամ գնացք նստում։

◆ Յունիսի 4-ին կայացաւ վրաց հասարակական գործիչ Ա. Ի. Սարաջեվի թաղումը։ Թաղմանը ներկայ էին հասարակական զանազան հիմնարկութիւնների և ընկերութիւնների ներկայացուցիչներ։

◆ Թիֆլիս ժամանեց Յունաստանի ռուսական դեսպան Ե. Պ. Դեմիդով։

◆ Տեղացի ռուս քահանայ Կ. Պլուժնիկով առանձնաշնորհումն է ստացել իր հնարած խոհանոցային վառարանի համար։ Վառարանը ունի այնպիսի յատկութիւններ, որ ուր ուզենան՝ կարող են փոխադրել և դրա հետ միասին խոշոր տնտեսութիւն է անում վառելիքի։

◆ Ներկայումս Թիֆլիսում է գտնվում Շանհաւսկիի համալսարանի պրոֆեսոր Ն. Կ. Կոլցով։

◆ Մայիս ամսվայ ընթացքում Կովկ. Հայոց Բարեգ. Ընկ. ընթերցարանն են յաճախել 3133 հոգի, որից 1430-ը իգական սեռից և 1703-ը՝ արական։ Գրադարանից բաց է թողնված կարդալու համար 1722 գիրք, որից 1034-ը հայերէն և 688-ը՝ ռուսերէն։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Մեզ հաղորդում են, որ Գանձակի նահանգի Սլաւեանկա գիւղում յունիսի 1-ին կազմվեց անասունների ցուցահանդէս։ Ցուցահանդէսը բացեց Գանձակի նահանգապետ իշխ. Օբոլենսկի։ Ցուցահանդէսին բերված էին 300-ից աւելի գլուխ անասուն զանազան տեսակի և ցեղի։ Էկսպերտային յանձնաժողովը իր աշխատանքները վերջացրեց յունիսի 2-ին, իսկ յունիսի 3-ին բաժանվեցին պրեմիաներ. այն է՝ արծաթեայ և բրօնզեայ մեծ ու փոքր մեդալներ՝ դրանց հետ միասին տրվեցին և դրամական նուէրներ 15, 10, 5 րուբլի։ Այդ օրն էլ փակվեց ցուցահանդէսը։

◆ Անդրկովկասի զանազան տեղերից ստացված տեղեկութիւնների համաձայն, ցորենի, գարու և հաճարի ցանքսերը լաւ բերք են խոստանում. այդ բանին նպաստում են մանաւանդ վերջերս տեղացող անձրևները։

◆ «Баку» լրագիրը հաղորդում է, որ առևտրի և արդիւնաբերութեան մինիստր Տիմաշեվ հրահանգել է Խարկովի գործարանային վերատեսուչ Գնեդիչին՝ անմիջապէս գալ Բագու գործադուլի շարժումը քննելու։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստր Կասսոյի հրաժարականը, մայրաքաղաքի լրագիրների ասելով, վճռված պէտք է համարել։ Պրուտչենկոյի թեկնածութեան շանսերը թոյլ են. աւելի հաւանական է, որ մինիստրի պորտֆէլն առաջարկվի սենատոր Մամոնտովին։

◆ Պետերբուրգում ժողովրդական կրթութեան մասնաժողովը միաձայն առաջարկեց ընդունել Պետերբուրգի համալսարանին կից բժշկական ֆակուլտէտ բանալու նախագիծը, որի իրականացման համար հարկաւոր է 10 միլիոն րուբլի։ Առաջարկի քննութեան ժամանակ ժող. լուս. մինիստրութեան ներկայացուցիչները ներկայ չէին. նրանք սկզբից հեռացան մասնաժողովից։

◆ Յայտնի գործարանատէր Բրոդսկին ընդարձակ հողաբաժիններ է ձեռք բերում Պաղեստինում՝ կիէվաբնակ հրեայ ընտանիքների համար։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՇԽ ԶՈՒԳՈՐԴՈՒԹԻՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԷՆՈՒՄ

II

Բացի Հիւպշմանի բերած օրինակներից՝ կարելի է թւել և ուրիշները։

Աշխար—լաց, հառաչ, ողբ։ Կարող ենք առաջուց ենթադրել, որ այս բառը պարսկական է, բայց հէնց մեզ յայտնի պարսկական նիւթերում նա բացակայում է։ Նրան աւելի մօտ է հին հնդկական akšára-m-ը (նշանակում է՝ տառ, ձայնաւոր, վանկ, խօսք). սակայն սրա ստուգաբանութիւնն էլ պարզ չէ։ Այդ բառի ստուգաբանական ազգակցութիւնը բացատրելու համար կարելի է բերել լատիներէն quiritare կամ quiritari (գոռալ, ճչել). այստեղից իտալական gridare և ֆրանսիական crier. Հնչիւնական այս ձևի համապատասխանութիւնների հետ զուգընթաց մենք նկատենք լատինական queo, quire (կարողանում եմ, կարողանալ) և հին հնդկական kšayati (տիրում է), զենդական χšayete (կարողանում է), լատինական quatio (ցնցում եմ, տարուբերում եմ) և հին հնդկական kšata-m (վնաս, վէրք)։

Աշխոյժ—կայտառ, կենդանի, գործունեայ, տաք։ Հին պարսկերէնում, ըստ երևոյթին, եղել է մի ածական՝ *χšaudya. Սրա արմատը՝ χšūd (հին հնդկերէն kšūd) նշանակում է յուզվել. հին հնդկերէն kšodáyati (ցնցում է, յուզում է). համմ. P. Horn: «Grundriss der persischen Etymologie» šōher Gatte (ամուսին, այր) բառի հետ, որովհետև šōher-ը հնչիւնական փոփոխութիւնների միևնոյն արմատին է պատկանում։ Աւեստերէն χšudra նշանակում է «սերմն», որտեղից աւեստ. *χšaudraka (qui testiculos habet), որից նոր պարսկական šōher-ն*) է։ Հին պարսկերէնում շրթունքային հնչիւնը այստեղ հազիւ թէ ϑ (dh)**) եղած լինի, այլ աւելի շուտ d, որը միանալով dy-ի (dj) հետ՝ հայերէնում վերարտադրվում է որպէս ž, հայկական տրանսկրիպցիայով՝ ժ. այսպէս՝ աշխորժ-ը, ըստ երևոյթին, առաջ է եկել հին պարսկական *χwardya խօսքից։ Ի հարկէ, լինում են դէպքեր, երբ զուգընթաց հին պարսկական dy-ին՝ հայոց լեզւում մենք գտնում ենք ջ հնչիւնը, օրինակ՝ մէջ բառը։

Բայց այս երևոյթը նկատելի է ոչ թէ փոխ առնված բառերում, այլ արմատական հայ բառերի անդրադարձութիւններում, այսինքն՝ ընդհանուր հնդկաեւրոպական (համմ. madhya, medius)։ Հայկական մէջ-ը եկնում է ընդհանուր հնդկաեւրոպական *medhyo-ից։

Դշխոյ***)—թագուհի. պահլաւական *diχšway նոյնն է (?). հին հնդկերէն dyukšá—երկնային+vay—կամ vayas—թռչուն, թռչնիկ=զենդական vay—, պահլաւական vaū, vā-yandak. Սեմասիոլոգիական տեսակէտից պահլաւական humay-ն առասպելական թռչուն է, որ իշխանութիւն ու բաղդաւորութիւն է բերում. այստեղից humāyūn—ի բարձուստ իշխանութեամբ օժտված, օգտաւէտ, իսկ հին ենիսէյական (օրհոնական) թուրքերի մօտ, որոնք մասամբ ենթարկված են պարսկական ազդեցութեան, Umaj, ըստ երևոյթին, բարձրագոյն կին աստուածութեան անունն է (այժմ, ըստ ակադեմիկոս Րադլովի չօր****) կոչված ցեղի աստուածութիւնն է, որ երեխաներին է հովանաւորում, բայց և մեռածների հոգիները է տանում)։ Ի նկատի ունենալով, որ dyukšá բառն ունի ոչ թէ արխաիկ, այլ սոսկ հնդկական կազմութիւն—dir-ից, բաղաձայններից առաջ՝ dyu—, արակ. և իգ. ս. երկինք և kša-ից, որ, հաւանական է, kši-ից է (ներկայի եզ. թւի 3-դ դէմքը՝ kšéti կամ kšiyáti)—որևէ տեղ անդորր դրութեան մէջ գտնվել—, *diχšvay-ն ֆարսական կրօնական կենցաղի վրա ունեցած հնդկական ազդեցութեան նշաններից մէկը պէտք է համարել, նշաններ, որ անաչառ հետախուզութեան դէպքում կարելի է բաւականին թւով գտնել Աւեստայի գրքերում, սկսած զուտ արտաքին, ոչ միտումաւոր նմանողութիւնից՝ վեդական ստանաւորական չափերի (համմ. նմանապէս Աւեստայի Ներիօսենգեան սանսկրիտերէն թարգմանութիւնը, Արևելեան Իրանում հնդկական—ոչ տիբեթական կամ չինական—բուդդայականութեան ծաւալումը Սասանեանների օրով, նոյն ժամանակներում հնդկական քաղաքակրթութեան մուտքը Պարսկաստան և այլն)։

Բոշխնեմ (կամ. բոշխնեցի)—հրճվում եմ, զուարճանում եմ։ Դժուար չէ այստեղ նկատել, օրինակ, սանսկրիտական bubhuk-šate (ուզում է ուտել, օգտվել), որ bhuğ-ի (ներկ. ժամ. bhoğati կամ bhunakti) դեզիդերատիվ (ցանկացողական) ձևն է։

Վերոյիշեալ երաշխ-ը նշանակում է ոչ թէ միայն «շէկակարմէր» (ինչպէս այդ արդէն տեսանք), այլ և порука—երաշխաւորութիւն։ Ստուգաբանօրէն այս բառին յարմարվում է, կարծեմ, հին պարսկական raχša (պաշտպանութիւն կամ պահպանութիւն), հին հնդկական rakšati-ն (պաշտպանում է)։

Երաշխեպք բառը ենթադրաբար նշանակում է տանջանք, չարչարանք, խոց, վէրք։ Այսպէս են ասում բառարանները. իսկ ես չը գիտեմ մի գրող, որ գործածելիս լինէր այդ բառը։ Երաշխեպք-ին մօտ է, թերևս, զենդական χšvaeva (իժ, օձ) բառը. նոր պարսկերէն šēbā, պահլաւերէն šēpāk.

Իշխեմ, իշխան—պէտք է որ յանգէն χšay արմատին (տիրել, կարենալ)։ Սկզբի ի տառը, ակնյայտ է, որ awi-ից է, այնպէս որ հայկական բառերի նախաձևը հին պարսկերէն հնչում էր *awi-χšay, *awi-χšayana (սըրան շատ նման է հին պարսկերէն drauğana—ստախօս)։

Խշ-ից շխ կազմութեան վերաբերեալ քիչ թէ շատ հին օրինակներին կարելի է աւելացնել հետևեալները։

Դաշխուրան (սեռ. դաշխուրանի)—անօթի տեսակը՝ խեցի, բաժակ և այլն. հին պարսկերէն *daχšava-dhāna-m՝ *daχšava բառից, որ նշանակում է այրվող նիւթ, կիզանուտ (*daχšu-ից—վառվող, այրվող. հին հնդկերէն d^{c}ákšu—կամ dákšu—, ինչպէս աւեստական ma^{i}nyava-(որ է ma^{i}nyu-š—«ոգի» բառից)—նշանակում է «հոգևոր» և այլն), և dhāna-m, նոր պարսկերէն -dān (լծորդված), նշանակում է «պահեստարան», «շտեմարան», որ ընդհանուր կանոնի համաձայն հայերէնում է -րան։

Ծանօթութիւն։ Եթէ այս կազմութիւնը ճիշդ է, այն ժամանակ դաշխուրան-ը պէտք է տարբերել յուրան-ից—նեղբերան անօթ, «գրաֆին», բուրգ—որ կարող է յանգել հին պարսկական *yava-dhāna-m—«գարու սափոր» (?), նոր պարսկերէն *ğau-dān.

Միւս բառը, որի վրա հրաւիրել է իմ ուշադրութիւնը Կ. Կոստանեանը, դա Բարաշխ-ն է, որի իմաստը մութ է, որովհետև նա նշանակում է իբր թէ և «կարծր», և «կակուղ»։

Նոր օրինակներ կարելի է յիշատակել՝

Բադեշխան (Սայեաթ Նովան է գործածում այս բառը.—ուսան. Ա. Թումանեանի ցուցմունքով)—թանգագին քարի մի տեսակն է (топазъ?)*)—համմ. հարազատ թանգագին քարերով առատ վայրի անուան՝ Bādaχšān-ի հետ։

Ակադեմիկոս Ֆ. Ե. Կորշ

---

*) Նոր-պարսկական šoi («էրիկ») համանիշ է šoher-ին,=աւեստական *χšauda (=χšaudraka).

**) ϑ-ից մենք սպասելու էինք պարսկական տեղաբարբառներում r-ի երևան գալը։

***) Ուսանող Ա. Թումանեանի ցոյց տուածն է։

****) Ծանօթ. թարգմանչի.—Չօր կոչված ցեղը՝ դա Արևելեան Ալտայի լեռնական թաթարներն են։

*) Կասկածելի է, որ այն լինի տօպազ. Ճարդէնը (մանրգէտ-ակնագործ) ցոյց է տալիս, որ «բալախշան» կոչվում է վարդագոյն սուտակը (рубинъ)։ Մարկօ Պօլօն այդ սուտակները «balaxki» կամ «balasci» է անուանում։

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹԸ ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ

—

Քութայիս, 1 յունիսի

Կիրակի, ամսիս 1-ին, Քութայիսի ծխական դպրոցի շէնութեան մէջ կայացաւ հայկական երեկոյթ վիճակախաղով՝ յօգուտ դպրոցի։

Երեկոյեան ժամը 9-ին բացվեց երեկոյթը «Մեր Հայրենիք» խմբական երգով։ Ապա տ. Զ. Ի. Սէնէվիչ երգեց սօլօ պիանինօյի դաշնակցութեամբ։ Յարգելի տիկինը իր շնորհալի ձայնով հրճուանք պատճառեց հասարակութեան և արժանացաւ բուռն ծափահարութիւնների և ստացաւ մի շքեղ ծաղկեփունջ։ Նրան յաջորդեց Բ. Ե. Սաադա, որը նոյնպէս աջողութեամբ երգեց մի քանի կտորներ։ Յետոյ հանդէս եկաւ Գ. Ա. Խաչատրեան որ վիոլօնչէլի ու քամանչայի վրա գեղեցիկ կերպով նուագեց զանազան մրմունջներ։

Մեծ զուարճութիւն և կուշտ ծիծաղ պատճառեցին, վրաց խմբի վաստակաւոր դերասան Միք. Զանոյեանի և պ. Սարուխեանի միասին երգած կուպլէտները, նուիրված օրվայ դէպքերին։

Մէջ ընդ մէջ երգում էր Երուանդ քահանայի մեծ ճաշակով պատրաստած երկսեռ խումբը։ Ճշմարիտ որ տէր-հայրը գերբնական ջանք էր գործ դրել վրացախօս մանուկներից պատրաստել մի այնպիսի խումբ, որ իր համաչափ և քաղցրալուր երգով ժողովրդին հիացմունք պատճառեց։

Երեկոյթին նուագում էր թէ զինուորական նուագախումբը և թէ զուռնա-դհօլը։ Պատրաստված էր և ճոխ բուֆէտ։

Դպրոցի լայնատարած դահլիճում եւրոպական և տեղական պարերը շարունակվեցին մինչև ուշ գիշեր։

Շնորհակալութեան արժանի է և հոգաբարձական խումբը, որ մեծ ջանք էր գործ դրել երեկոյթի աջողութեան համար։

Բայց ափսոս որ անձրևային եղանակը չը հաշտվեց երեկոյթի բաղդի հետ և սպասած արդիւնքը չեղաւ, թէև բաւական հասարակութիւն էր ժողովվել։

Ս. Նազարեան

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—օ—

«Բազմածնութիւն, արուեստական ամլութիւն և հակաբեղմնաւորական միջոցներ», դոկտոր Ս. Խաչատրեանի, 1914 թ.։

I

Երբ դուրս եկաւ բժ. Խաչատրեանի վերոյիշեալ գրքոյկը, ինձ մօտ երևաց ցանկութիւն՝ գրել գրախօսական, բայց մի քանի անձինք, որոնց թւում կար և բժիշկ, ասացին հետևեալը. «Որովհետև այդ գրքոյկը՝ ըստ իր բովանդակութեան վնասակար է, մանաւանդ մեր հասարակութեան համար, հետևաբար լաւը գերադասելի է, որպէսզի նա չը տարածվի։ Այդպէս էլ արի. բայց «Մշակի» 116-րդ համարում՝ կարդալով մի գրախօսական յօգուտ յիշեալ գրքոյկի՝ էլ լաւ անկարելի է։

Մեր ընկերակիցը իր առաջաբանում բացատրում է իր նպատակը. «Շատերը՝ մանաւանդ ժողովրդի ստորին խաւերը՝ ծանօթ չեն հակաբեղմնաւորական միջոցների հետ, այն ինչ՝ շատ յաճախ, հէնց այդ խաւերի մէջ կարիք է զգացվում հակաբեղմնաւորական միջոցների»։

Ահա ինչ է գրում այդ հարցի մասին գերմանացի բժ. Hammer *). «Ռուսաստանում և Գերմանիայում օրէնքը պատժում է՝ թէ հակաբեղմնաւորութեան և թէ վիժումի գործադրումը»։ Նոյն բժ. ընդդէմ է այդ միջոցների «տարածման ժողովրդի լայն խաւերի մէջ. ընդհակառակը՝ պիտի ցոյց տալ մայրութեան կարևորութիւնը» և այլն։ Ահա որպիսի տարբեր հայեացքներ կան գերման և հայ բժիշկների միջև մեզ զբաղեցնող հարցի առիթով։

Բժ. Խաչատրեանը խօսելով՝ որդեծնութեան մասին Ֆրանսիայում՝ գրում է. «Ֆրանսիան մահանում է. երեխաներ համարեա գոյութիւն չունեն... բուրժուան, ինտելիգենցիան երեխաներ չունեն, կամ մէկ, սակաւ՝ երկու»... Պիտի ասած, որ նոյն երևոյթը սկսել է երևալ և ուրիշ երկրներում. ունևորը չէ կամենում երեխայ ունենալ ունենալով միջոց, աղքատը՝ արտադրում է շատ՝ զուրկ լինելով միջոցներից և այլն։

Վերջին տարիներս Գերմանիայում նոյնպէս ազգաբնակութեան աճումը զգալիօրէն պակսել է, և դա յարուցել է մեծ տագնապ։ Պատճառը հակաբեղմնաւորական միջոցների գործադրումն է, որի դէմ առաջարկվում են խիստ միջոցներ և պատիժներ։

Բայց ոչ մի երկրում ազգաբնակութեան աճման հարցը այնքան չէ հետաքրքրում, ինչպէս մահացող Ֆրանսիայում։ Նորերս յայտնի գիտնականների ժողովում (Société savante) Ֆերդինանդ Բիւիսսոնի նախագահութեամբ յիշեալ հարցը լուրջ քննութեան առարկայ էր դարձել։ Բաւական է ասել, որ միայն Պարիզում տարեկան 100,000, իսկ ամբողջ Ֆրանսիայում 500,000 վիժման դէպքեր են լինում, իսկ հակաբեղմնաւորական միջոցների գործադրումն ունի շատ լայն ծաւալ։ Վերոյիշեալ գիտնականների ժողովը, մանաւանդ մինիստր Բերանժէն և Բիւիսսօնը գլխաւոր պատճառը Ֆրանսիայի մահացման՝ վարքերի ապականման մէջ են գտնում։ Երբ մարդիկ ամուսնութեան մէջ կամենում են ունենալ լոկ անձնական սեռական զուարճութիւն՝ զրկելով իրանց երեխաների հոգսերից, այդ միայն վարքերի ապականութեամբ կարելի է բացատրել։ Այդ տեսակ ամուսինները չարաչար մեղանչում են թէ հասարակութեան, թէ հայրենիքի դէմ՝ ջլատելով նրանց ույժը. կենսունակութիւնը և այլն։

Մենք երկար չենք կամենում քննել բոլոր մասերը՝ շատ հասկանալի պատճառներով. վրա բերում ենք հեղինակի եզրակացութիւնը և առհասարակ նրա նպատակը։ «Պիտի գործադրել հակաբեղմնաւորական միջոցներ, եթէ այդ պահանջում են ծնողների հիւանդութիւնը, նիւթական միջոցները և մանաւանդ ժառանգականութեամբ անցնող հիւանդութիւնները... աւելի լաւ է, ոչ մի երեխայ չունենալ քան առաջ բերել հիւանդոտ, թոյլ, վատ սերունդ, որը ոչ իր համար, ոչ ծնողներին և ոչ էլ հայրենիքին օգտակար լինել կարող է»։

Գեղեցիկ ցանկութիւն, եթէ իսկապէս այդ տեսակ անձինք օգտվեն յիշեալ խրատներից. եթէ այդպէս լինէր, այժմս Ֆրանսիան չը պիտի մահանար, ինչպէս գրում է հեղինակը, ինչպէս գրել է հանգուցեալ Զօլան իր նշանաւոր վէպի մէջ՝ «Fécondité». Եւ այժմ Ֆրանսիայի ազգաբնակութիւնը՝ վարակված լինելով հակաբեղմնաւորական ախտով՝ հասել է այն դրութեան, որ ո՛չ բուռն ազգասիրութիւնը, ո՛չ նրա նշանաւոր գիտնականների, հայրենասէրների նախազգուշացումը և խորհուրդները և ոչ երկրի սպառնացող վտանգը՝ չեն ազդում ազգաբնակութեան վրա, որը «մահանում է» ի խոր վիշտ ո՛չ միայն Ֆրանսիայի, այլ ամբողջ մարդկութեան։

Բժ. Բ. Աղասարեան

---

*) «Половое несчастіе женщины», перев. съ немецк. 1913 г.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պատասխան պ. Գարեգին Նրիցեանին

Թիֆլիս, 4 յունիսի

«Մշակի» № 118-ում տպված ձեր պատասխանի առիթով վարչութիւնը յայտնում է, որ եթէ մինչև այժմ լռել է՝ այն պատճառով, որ խնայելով ձեզ, հնարաւորութիւն էր տալիս, որպէսզի դուք մաքրէք ձեր դրամական հաշիւները։ Սակայն ձեր անփութութեան շնորհիւ խմբակցութեան դրամարկղի վրա արգելք դրվեց կատարողական թերթով։ Այդ պատճառով վարչութիւնը որոշեց ձեր ապօրինի արարքները հրապարակ հանել հասարակական դատաստանի առաջ։

Այժմ դուք ձեր պատասխանի մէջ, որում հիմնովին խեղաթիւրված են փաստերը, յայտարարում էք «դատի ենթարկել վարչութիւնը»։ Սպասում ենք այդ դատին, որտեղ ձեր հասարակական-թատրոնական գործունէութիւնը հանդէս կը գայ իր ամբողջ մերկութեամբ։

Զուբալովեան Ժողովրդական Տանը
գործող Հայկական Դրամատիկ Խմբակցութեան Վարչութիւն

—

Ախալցխա, 2 յունիսի

Ախալցխայի Հայ Կանանց Բարեգործական Ընկերութեան վարչութիւնը քաղցր պարտականութիւն է համարում հրապարակով յայտնել իր խորին շնորհակալութիւնը մեծարգոյ բժիշկ պ. Արտաշէս Բուդուղեանին՝ Ընկերութեան նախաձեռնութեամբ Ախալցխայում բացվելիք մանկական ամարային ակումբի օգտին իր նուիրած 200 րուբլու առիթով։

Ի դիմաց վարչութեան
Ե. Զաթալաշեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻԱՅԻՑ

—

Իռլանդական հօմ-րուլի վերջին հանգրուանը.—1911-ի «Պարլամենտական օրէնքը»։—Առաջարկներ լուծելու համար այդ բարդ հարցը։

Լոնդոն, 7 մայիսի

Երկու ամսից ի վեր բոլոր երկրների ու ազգերի մամուլի օրգանները և, կարելի է ասել, բովանդակ աշխարհը բուռն հետաքրքրութեամբ հետևում են հօմ-րուլի առիթով սկսված պարլամենտական պայքարի զանազան երևոյթներին։ Ազգութիւնների ցաւատանջ հարցն է դա, տիրողի և տիրվողի յարաբերութիւնների յաւիտենական պայքարը։ Զանազան երկրներում գոյութիւն ունի այդ հարցը և գուցէ հէնց այդ պատճառով էլ արժէ հետևել նրան։

Արտասահմանում տարածված վրդովեցուցիչ և չափազանցված Անգլիայում մի քաղաքացիական պատերազմի հնարաւորութեան մասին՝ կարելի է սկզբից համարել անհիմն և միմիայն իբրև արդիւնք պարլամենտական և մամուլի անսովոր կերպով լարված դրութեան օտարների վրա թողված տպաւորութեան։

Սրանից մի քանի օր առաջ ծովային մինիստր Ուինստըն Չըրչիլ պարլամենտում խօսելով արտասահմանում տարածված զրոյցների մասին ասաց, որ օտարները մեզ չեն ճանաչում, նրանք ծանօթ չեն մեր քաղաքական իդէալներին և պարլամենտական սովորութիւններին։ Նրանք չը գիտեն, որ արտաքին բարդութիւն ծագելու դէպքում, մենք անմիջապէս կը մոռանանք մեր ներքին կռիւները և պարլամենտական պայքարը և, իբրև մի հոգի և մի ազգ, կը ծառանանք օտար թշնամիների դէմ։ Թւում է, որ ոչինչ աւելի ճշմարտօրէն բնորոշում է անգլիական քաղաքական կեանքն իր ներքին կռիւների ընթացքում՝ քան Չըրչիլի վերոյիշեալ անմեղ արտայայտութիւնները։ Նախ պէտք է ասել, որ ներկայ լիբերալ կառավարութիւնը 1905 թ. դեկտեմբերին իշխանութեան հասնելուց ի վեր մի հիմնական յեղափոխութիւն մտցրել է Անգլիայի քաղաքական, ֆինանսական և սոցիալական օրէնսդրութեան օրինագրքում. բովանդակելով Լլօյդ Ջօրջի, Պէրնսի, Մաստրմընի և այլոց պէս բաղկեալ սոցիալիստներ, Ասկվիտի, Մօրլիի և Չըրչիլի պէս համոզված լիբերալներ, ներկայ կաբինէտը վերջին 9 տարվայ ընթացքում հիմնապէս յեղաշրջել է հարկային դրութիւնը, թեթևացնելով միջին դասակարգերի (մանր բուրժուայի) հարկերը և բարդելով մի մեծ բեռ եկամտային չը շահված ժառանգական հարստութիւնների վրայ, և առանձնապէս սանձելով լորդերի պալատի դարաւոր առանձնաշնորհները և ջնջելով վերջնապէս նրա վետօյի իրաւունքը։ Եւ առանց այս վերջին օրէնսդրութեան արդէն անհնար կը լինէր անց կացնել հօմ-րուլի բիլլ և Գալլէսի երկրում եկեղեցին ևս պետութիւնից բաժանելու բիլլը։ Երկուսն էլ երրորդ ընթերցումից յետոյ ստանալու են օրէնքի ույժ 3—4 շաբաթից։

Ներկայիս վերցնենք հօմ-րուլ բիլլը։

Անցնող սերունդին ծանօթ պէտք է լինի, որ 1886 թւին յայտնի պրօֆ. Գլադսթօն առաջին անգամ պարլամենտում բերեց հօմ-րուլի օրինագիծը։ Սակայն երկրորդ ընթերցումով արդէն մի երկպառակութիւն ծագեց հէնց լիբերալ կուսակցութեան շարքերում, և Չեմբըրլէյն՝ Հարտինգտըն ռադիկալ թևը միացաւ պահպանողականներին, և լիբերալիզմը, կորցնելով մեծամասնութիւնը, հօմ-րուլը մերժվեց համայնքների պալատում։ 1892 թ. լիբերալները նորից իշխանութեան եկան և Գլադսթօն 1893 թ. պարլամենտին երկրորդ անգամ բերեց հօմ-րուլի բիլլը։ Անցած 7 տարիների պրոպագանդն ու իռլանդական նացիօնալիստների ագիտացիան բրիտանական հանրային կարծիքում գոյացրել էին մի համակրական վերաբերմունք դէպի նացիօնալիստների համեստ ու արդար պահանջը։ Երկարատև և բորբոքված վիճաբանութիւններից յետոյ՝ բիլլը քուէարկվեց համայնքների պալատում և ուղարկվեց լորդերի պալատը՝ ստանալու սրա հաւանութիւնը։

Ըստ անգլիական սահմանադրութեան իրաւունքի թէօրիայի,—նուիրագործված 1295 տարուց ի վեր—մի օրէնք ստանում է օրէնքի ույժ, երբ դա անցնի համայնքների և լորդերի պալատներից և ստանայ թագաւորի հաւանութիւնը։ Լորդերի կամ թագաւորի մերժելու դէպքում, համայնքների պալատը մնում է մի յոյժ անճար դրութեան մէջ։ Սակայն դարերի էվօլիւցիայի ընթացքում, վերջինս սակաւ առ սակաւ ընդարձակել է իր իրաւասութիւնը մնացած երկուսի վրա՝ 1688 թ. յեղափոխութեամբ կրճատելով թագաւորի վէտօյի իրաւունքը de facto, և ջնջելով լորդերի օպպօզիցիայի իրաւունքը 1911-ի «պարլամենտական օրէնքով»։

Ուրեմն 1893 թ. էլ լորդերի պալատը մերժեց իռլանդական հօմ-րուլը, դա լինելով երկրորդ յուսաբեկումը իռլանդական նացիօնալիստների տենչերին։

Դարաւոր աւանդութիւնների և ցեղային միահեծանութեան հալոցում տապակված անգլիական ժողովրդի մասսան՝ մի ժամանակ զզվեց լիբերալների «անխոհեմ» քայլերից, և պահպանողականները, փոքրիկ ընդմիջումներով, փորձեր արին բուժել իռլանդական վէրքը հողատիրական սկզբունքների և պայմանների մի հիմնական վերաքննութեամբ։ Յաջորդաբար անցան մի շարք օրէնքներ՝ պարտադրելով իռլանդացի մեծ հողատէրերին ծախել իրանց հողերը բնիկ մշակողներին, որոնք պետական գանձից վերցնելով փող յոյժ էժան տոկոսով $2^{1}/_{2}$ $^{0}/_{0}$ կամ ամենաշատը $3^{0}/_{0}$—կարող էին գնել փոքրիկ հողաբաժիններ իբրև իրանց անկապտելի սեփականութիւն։ Մի քանի տարվայ ընթացքում Իռլանդիայում նոր կեանք սկսեց. մօտ 200,000 ընտանիքներ պետական օժանդակութեամբ այժմ կազմել են նոր օջախներ իբր անկախ հողատէրեր։

Սակայն բոլոր կիսամիջոցները բնականաբար չէին գոհացնի իռլանդական ազգը։ Նրանք այդ ազգի պատգամաւորները անգլիական պարլամենտում կազմում են մի մեծ թիւ, 103 պատգամաւոր, որոնցից 70—75 նացիօնալիստներ-հօմրուլիստներ են Րէդմընդի ղեկավարութեամբ, 7-ը անկախ-էքստրեմիստներ են Օպրայընի ղեկավարութեամբ, իսկ մնացեալները Ըլստըրի քաղաքականութեան և կամ կաթօլիկ իռլանդական պահպանողականութեան ներկայացուցիչներ են։

1909-ի բիւջէտային կատաղի պայքարից յետոյ, երբ լորդերի պալատը ընդդիմացաւ Լլօյդ Ջօրջի հարկային նոր օրէնսդրութեան, լիբերալ կաբինէտը հասաւ այն եզրակացութեան, որ առանց ջախջախելու լորդերի վէտօյի իրաւունքը, անհնար կը լինէր անցկացնել մի շարք անհրաժեշտ օրէնքներ։ Եւ Ասկվիտի կաբինէտը 1911-ին համայնքների պալատին բերեց համբաւաւոր «պարլամենտական օրէնքը»։ Համաձայն այս օրէնքի տրամադրութեան, «երբ որևիցէ ֆինանսական օրինագիծ երեք յաջորդական տարիների ընթացքում համայնքների պալատից ուղարկվի լորդերի պալատին և նրանք երեք յաջորդական սեսիաներին էլ մերժեն համայնքների անցկացրած օրինագիծը, դա ներկայացվելու է թագաւորին, և արքայական հաւանութիւնը տրվելու դէպքում՝ կը լինի օրէնք, չը նայած թէ լորդերը հաւանել են թէ ոչ»։

Ինչպէս տեսնվում է օրէնքի տերմինոլօգիայից, դա մի կերպով օրինագրում և խառցնում է անգլիական սահմանադրական կօնվենցիաները։ 200 տարիներից ի վեր Անգլիայի թագաւորները կամ թագուհիները չեն համարձակվել մերժել իրանց հաւանութիւնը կաբինէտի ներկայացրած և համայնքների ու լորդերի պալատների անցկացրած օրէնքներին։ Երկրորդ՝ ֆինանսական և բոլոր օրինագծերը, որոնք ժողովրդի տնտեսական դրութեան հետ ունեն որևէ կապակցութիւն։ Եւ որովհետև ժամանակակից կեանքում դժուար է երևակայել որևիցէ օրէնսդրական քայլ, որ ուղղակի կամ անուղղակի կերպով չէ անդրադառնում ժողովրդի տնտեսական կեանքի վրա, ուրեմն և այդ բիլլը որոշապէս ուղղվում էր լորդերի վէտօյի իրաւունքի դէմ։ Դա ժառանգական արիստօկրատիայի և դարերով Անգլիայի բաղդը տնօրինող լորդերի քաղաքական ազդեցութեան դէմ ուղղված վերջին մահացու հարուածն էր։ Լորդերը բնականաբար մերժեցին կառավարութեան խաղաղ ճանապարհով իրանց առանձնաշնորհներին սպառնացող այդ օրէնքի դէմ, և տրամադրվել էին մերժել—որովհետև մինչև այդ օրը լորդերի հաւանութիւնը անհրաժեշտ էր բիլլերին օրէնքի ույժ տալու համար—երբ Ասկվիտը սպառնաց խորտակել պահպանողական լորդերի ընդդիմութիւնը՝ Թագաւորի միջոցով ստեղծելով 500 լիբերալ լորդեր վերին պալատի մէջ էլ «պարլամենտական օրէնքը» անցկացնելու համար։ Արիստօկրատական գերազանցութեան և դասակարգային գիտակցութեան զգացմունքներով սնված ու մեծացած 500 լորդերը՝ սարսափած նոր ստեղծվելիք parvenu լորդերի իրանց շարքերի մէջ գործելիք արշաւանքի հեռանկարից՝ նահանջեցին համայնքների պալատի վճռականութեան առջև և տուին իրանց հաւանութիւնը «գործելով դարերի ընթացքում եզական մի քաղաքական ինքնասպանութիւն», ինչպէս ասում է հակառակորդների լիդէր լորդ Հօլսբըրի։ Վաղուց ի վեր համայնքների պալատը վայելում է քաղաքական և օրէնսդրական բացարձակ վեհապետութիւն։

Ույժ տալով «պարլամենտական օրէնքին», կաբինէտը 1912 թ. բերեց երրորդ հօմ-րուլի օրինագիծը, որ այժմ երեք տարվայ պայքարից յետոյ ահա կատարելութեան է հասնում առաջիկայ մի քանի շաբաթվայ ընթացքում։

Ըլստըրի բողոքական փոքրամասնութիւնը, որ սկզբից ի վեր բողոքել է իրլանդական հօմ-րուլի դէմ իբրև մի հարուած ուղղված Ըլստըրի նահանգի չորս քաղաքական կոմսութիւնների կրօնական և քաղաքական ազատութիւններին, ներկայումս գտնվում է յոյժ լարված դրութեան մէջ, և ակներև է բոլոր նրանց, որոնք հետևել են վերջին երկու ամսվայ անցքերին։ Երեք տարուց ի վեր այդ մօտ մի միլիօն ըլստըրցիները՝ սըր Էդուարդ Կարսընի, լորդ Լնդնդէրրիի և այլ պահպանողական լիդէրների ղեկավարութեամբ զինվում և պատրաստվում են կռւելու կառավարութեան դէմ այն դէպքում, երբ համայնքների պալատը անցկացնի հօմ-րուլը և քայլեր անի գործադրելու Դըբլինում։ Թէ արիստօկրատիկ ծագում ունեցող իրլանդացի օֆիցէրներ, ինչպէս գեներալ Գաֆֆ, ըմբոստութիւն ցոյց տուին քաղաքացիական իշխանութեան, երբ վերջինս հրաման տուեց շարժվելու, դա էլ նոյնչափ յայտնի մի իրողութիւն է։

Ներկայումս դրութիւնը հասել է իր վերջին հանգրուանին, և միակ կարելի լուծումը մնացել է կայացնել մի քաղաքական և արտաօրէնսդրական մի կօմպրոմիս—ամենից բնորոշող գիծը անգլիական քաղաքական փիլիսոփայութեան՝ պաշտպանված Լօքից, Ջօն Ստիւարտ Միլլից և ժամանակակից իրաւաբաններից։

Հէնց վաղը կառավարութիւնը պարլամենտին բերում է իրլանդական ինքնավարութեան (հօմ-րուլ) օրինագծի երրորդ ընթերցումը, որ մի քանի օրվայ վիճաբանութիւնից յետոյ եկող շաբթվայ ընթացքում կը դրվի քուէարկութեան և լիբերալ կաբինէտը՝ ունենալով մօտ 100 ձայնի մեծամասնութիւն (անգլ. լիբերալների, իրլանդացի նացիօնալիստների և սօցիալիստ բանւորականների բլօկը) ունենալով պահպանողականների վրա՝ օրէնքը կանցկացնի։ Բիլլը կանցնի ապահովաբար Համբարձման տօնի արձակուրդից յետոյ, կուղարկվի լորդերի պալատը, որոնք երրորդ անգամն էլ նոյնիսկ եթէ մերժեն, պարլամէնտական օրէնքի համաձայն, ներկայացվելու է Թագաւորի հաւանութեան։

Սակայն պահպանողական կուսակցութեան և բողոքական Ըլստըրին գոհացում տալու մտքով, կաբինէտը սկսեց մի շարք զիջումներ անել—օրինակ Ըլստըրի բողոքական չորս կոմսութիւնները (մօտ մի միլիօն դժգոհներ) 6 տարվայ ժամանակով ազատել շուտով գումարվելիք իրլանդական պարլամենտի օրէնսդրական իրաւասութիւնից։ Կարսըն, Պանըր Լօու և ուրիշ պահպանողական լիդէրներ պահանջում են Ըլստըրը արտաքսել հօմ-րուլի շրջանակից յաւերժապէս։

Ինչ եղանակով էլ որ լինի, Ասկվիտը, երրորդ ընթերցումի անցկացնելուց յետոյ, պիտի առաջարկի մի յաւելուածական բարեփոխող բիլլ, բանաձևելով Ըլստըրի բողոքական փոքրամասնութեան տրվելիք կօնսեսիաները։ Հեռագիրները ձեզ հաղորդել են գուցէ, որ սրանից մօտ մի ամիս առաջ ըլստըրցիները գաղտնի միջոցներով իրանց երկիրը մտցրին 40,000 հրացան և հաւասար չափով ռազմամթերք։ Սրանից էլ երկու շաբաթ առաջ կաթօլիկ նացիօնալիստներ և էքստրեմիստներ Րէդմօնդի և Դիլլընի ղեկավարութեամբ ներմուծեցին անհագին քանակութեամբ զէնք և այժմ արդէն սպառնում են կաբինէտին իրլանդական ազգային միութիւնը քանդելու բնաւորութիւն ունեցող զիջումներ չանել ըլստըրցիներին, հակառակ դէպքում սպառնալով ապստամբել։

Արշակ Սաֆրաստեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Հռոմից «Н. В.»-ին հեռագրում են, որ, պաշտօնական օրգանի ասելով, շուտով զէնքի են կանչվելու պահեստի գնդերը։

◆ Աւստրիան պաշտօնապէս պահանջեց Թիւրքաց կառավարութիւնից՝ վերջ դնել վճռական միջոցներով յոյների հալածանքին Փոքր-Ասիայում։

◆ Թէհրանում գործունէութիւն է սկսում Մոսկվայի մանուֆակտուրիստների սինդիկատը—Կօրշին, Գուբնէր և Դանիլօվսկայա ֆաբրիկաները,—ունենալով աջողութեան լաւ շանսեր։

◆ Հռոմից հեռագրում են, որ մի քանի մանր կոմմուններում հաւատով սպասում են, թէ Իտալիան կը յայտարարվի հանրապետութիւն և կազմված են արդէն հանրապետական կօմիտէտներ, պաշտօնեաները փոփոխվել են, ամենուրեք իջեցրված են թագաւորական գերբերը։

◆ Վերջին հեռագիրներից երևում է, որ յոյն-թիւրքական զինված ընդհարումն անխուսափելի է։ Մատնանշում են, որ Թիւրքիան իսկապէս անկարող է յարձակվել Յունաստանի վրա, եթէ Բօլգարիան թոյլ չը տայ նրան անցնել։ Սակայն Բօլգարիան հազիւ թէ թոյլ տայ, որովհետև այդ կը նշանակէ պատերազմ Ռումինիայի դէմ։ Ուստի և շատ կարելի է, որ Թիւրքիան Յունաստանի պաշտօնական՝ արդէն հրատարակված՝ հրովարտակին Խիոսը և Միտիլէնը գրաւելու մասին, պատասխանէ Փոքր-Ասիայից մօտ կէս միլիօն յոյներին արտաքսելով։

◆ Հռոմից հեռագրում են, որ ապստամբները ներս են խուժել Դուրացցօ, ուր համատարած կոտորած է։ Բոլոր հօլլանդացի ժանդարմները սպանված են։ Պրինցի կենդանի կամ սպանված լինելու մասին դեռ ճիշդ տեղեկութիւն չը կայ։ Պրինցի ընտանիքը ազատվել է մի ռազմանաւի վրա։ Բոլոր մեծ պետութիւնները ուղարկել են Դուրացցօ զօրամասեր։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ Զմիւռնիա է ուղարկվել ռուսական «Դօնէց» ռազմանաւը՝ ուղղափառներին պաշտպանելու համար։ Գիրսը մատնանշել է մեծ վէզիրին, որ անհրաժեշտ է եռանդով ճնշել ջարդերը։

◆ Բեռլինից հեռագրում են, որ դատախազը որոշեց պատասխանատուութեան ենթարկել ռէյխստագի անդամ սօց. դեմ. Լիբկնէխտին շքանշանների վաճառման մասին մերկացումներ անելուն համար։ Լիբկնէխտը ուրախ է, որ դատարանում կը մերկացնէ այդ պատմութեան մանրամասնութիւնները։

◆ Յունաց ռազմի նաւատորմի հրամանատար կարգվեց ծովակալ Կունդուրիօտիսը։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՍ ՏԱԼԻՍ ԵՄ ԹԱՐՄ ՏԵՍՔ ԵՐԵՍԻՆ

SCAVULINE
SCAVULINE

Արժանացած եմ յարգանքի կանանց կողմից, որովհետև պահպանում եմ նրանց երեսի թարմութիւնը, կանանց արժանիքներից մէկը։ Իմ հիւանդները—իմ հաւատարիմ բարեկամները—ազատ են գլխացաւից, երեսի բծերից, որովհետև իմ դեղահատիկները, որոնք նոյնպէս համեղ են՝ որպէս կօնֆէկտը, պահպանում են մարսողական գործարանների և աղիքների գործունէութիւնը, և դա շարունակ աջողվում է նրանց։

ՍԿԱՎՈՒԼԻՆ ԳԱԲԼԷՆԻ

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ՄԻԱՅՆ
ԳԱԲԼԷՆԻ ՍԿԱՎՈՒԼԻՆԸ:
(М. 33672)

ԲԻՕՄԱԼՑ
ԿՐԱԽԱՌՆ
ԵՂԲ. ՊԱՑԵՐՄԱՆ ՏԵԼՏՕՎ ԲԵՐԼԻՆ

Հիմնալի կերպով ներգործում է թոքերի հիւանդութիւն ունեցողների վրա, պաշտպանում է տուբերկուլօզը տարածվելուց, մաքրում է արիւնը, զարգացնում է շնչառութիւնը և կեանք է ներշնչում հիւանդ ու հիւծված օրգանիզմին։

Բիօմալցը տուէք թոյլ եւ հիւծված երեխաներին: Դուք դրանով նրանց պաշտպանած կլինեք հիւանդութիւններից:

Վաճառվում է դեղատներում և դեղավաճառանոցներում 1 ր. 80 կ. և 1 ր.։ Գրականութիւնը ուղարկում է «Աւտօսիլ» Ընկ.-ը Բեռլինում և Վիէնայում։

ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԴՐՈՇՄԸ՝ «ԵՐԿՈՒ ԹՉՈՒԿ»։
(Вил. 25091)

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի: Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւօտը 11—12 և երեկ. ժ. 7—9. Սեմենօվսկայա փող., № 18 (Վօրօնցովի արձանի մօտ): Բժշկի բնակարանը Սեմենօվսկայա, № 16.
(չ. ու. կ.) 804. 100—99

Լոյս տեսաւ
ԴՈԿՏՕՐ Վ. ԱՒ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑԻ
ԲԱԶՄԱԾՆՈՒԹԻՒՆ
ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱՄԼՈՒԹԻՒՆ և ՀԱԿԱԲԵՂՄՆԱՒՈՐԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐ
(Ռեցէպտներ և դեղեր հիւանդութեան և այլ դէպքերում յղութիւնից խոյս տալու համար)։
Գինը 25 կոպ.։
Ուրիշ քաղաքներից պահանջողները կը բարեհաճեն ուղարկել 35 կօպ. մարկաներ՝ ճանապարհածախսը մեզ վրա)։ Վերադիր վճարով չէ ուղարկվում. գրախանութներին միմիայն կանխիկ 30% զեղչ։
Դիմել՝ Тифлисъ. Редакція «Журналъ-Лечебникъ».
(Ե. ու.) 464. 10—8

ՀԻՒԾՈՒԱԾՈՒԹԻՒՆՆ
ու նիհարութիւնը, եթէ առաջացած է թոքախտից, սիֆիլիսից եւ կամ այլ քրօնիկական հիւանդութիւններից, նէվրաստենիան եւ ջղային հիւանդութիւնները, սեռական թուլութիւնը, սրտի հիւանդացումները, զառամութիւնը մեծ աջողութեամբ բժշկում է Սպէրմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ։

Սպէրմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպէրմինն է. այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել „ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ" անուան վրա և չը գնել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված ժահրամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանոթէրապիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կօպէկանոց նամականիշ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը։

Սպէրմին-Պէլին կայ ամենուրեք։

Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-вья С.П.Б.
Մատակարար Նորին Կայսերական Մեծ. Դրան
№ 4 (М. 8663) 0—4

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—12 ժ. 8 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 2 ժ. 11 ր., Գանձակ 4 ժ. 23 ր., Եւլախ 5 ժ. 43 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 56 ր. եր., Բագու 11 ժ. 50 ր. գիշ.: **Պօստատար գնացքը** № 4—10 ժ. 20 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 1 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 7 ր. առ., Եւլախ 6 ժ. 56 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 40 ր. առ., Բագու 3 ժ. 22 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 25 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 49 ր. եր., Գանձակ 11 ժ. 22 ր. գիշ., Եւլախ 1 ժ. առ., Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 58 ր. առ.: **Մարդատար գնացքը** № 12—4 ժ. 5 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 6 ժ. 48 ր. եր., Գանձակ 9 ժ. 32 ր., Եւլախ 11 ժ. 17 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 3 ժ. 33 ր., Բագու 7 ժ. 25 ր. առ.: **Խառն գնացքը** № 22—4 ժ. 58 ր. առ., հասնում է Աղստաֆա 9 ժ. 46 ր. առ., Գանձակ 2 ժ. 15 ր. ցեր., Եւլախ 4 ժ. 58 ր. ցեր.: Հաջի-Կաբուլ 11 ժ. 34 ր. գիշ., Բագու 5 ժ. 4 ր. առ..

ԲԱԹՈՒՄ.—**Պօստատար գնացքը** № 3—9 ժ. 54 ր. առ., հասնում է Միխայլովօ 1 ժ. 59 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.: **Մարդատար գնացքը** № 7—2 ժամ 18 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլովօ 5 ժ. 35 ր. եր., Բաթում 12 ժ. 48 ր. գիշ.: **Մարդատար գնացքը** № 9—8 ժ. 53 ր. գիշ., հասնում է Միխայլովօ 1 ժ. 4 ր. գիշ., Բաթում 10 ժ. 1 ր. առ.: **Խառն գնացքը** № 21 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 59 ր. գիշ., հասնում է Միխայլովօ 9 ժ. 3 ր. առաւ., Բաթում 10 ժ. 10 ր. գիշ.: **Արագ գնացքը** № 5—8 ժ. 16 ր. եր., հասնում է Միխայլովօ 11 ժ. 15 ր. գիշ., Բաթում 6 ժ. 33 ր. առ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստատար գնացքը** № 4/3—12 ժ. 56 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 53 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 11 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 38 ր. ցեր.: **Խառն գնացքը** № 24/25 (IV կարգի վագոններով)—10 ժ. 58 ր. առ., հասնում է Ղարաքիլիսա 9 ժ. 20 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 4 ժ. 18 ր. առ., Ալագեօզ 10 ժ. 8 ր. ցեր., Ուլուխանլու 1 ժ. 18 ր. ցեր., Նախիջևան 8 ժ. 18 ր. եր., Ջուլֆա 10 ժ. 13 ր. գիշ.: **Մարդատար գնացքը** № 18/17—6 ժ. 58 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 1 ժ. 57 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 5 ժ. 19 ր., Էջմիածին 10 ժ. 21 ր., Ուլուխանլու 10 ժ. 49 ր., Երևան 11 ժ. 42 ր. առ.: **Մարդատար գնացքը** № 14|13—11 ժ. 13 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 6 ժ. 14 ր. առ., Ալէքսանդրօպօլ 9 ժ. 41 ր. ցեր., Կարս 1 ժ. 8 ր. ցեր.:

ԲՈՐԺՈՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—7 ժ. 28 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 5 ր. առ., Բօրժօմ 12 ժ. 48 ր. ցեր.: **Մարդատար** № 19/20—3 ժ. 20 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 51 ր. ցեր., Բօրժօմ 8 ժ. 26 ր. երեկ.:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—7 ժ. 41 ր. եր. **Պօստատար գնացքը** № 3—8 ժ. 58 ր. առ.: **Մարդատար գնացքը** № 7—1 ժ. 42 ր. ցեր.: **Խառն գնացքը** № 21—2 ժ. 17 ր. գիշերվայ: **Մարդատար գնացքը** № 11—10 ժ. 5 ր. առ.:

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստատար գնացքը** № 4—9 ժ. 30 ր. երեկ.: **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 55 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 10—9 ժ. 51 ր. առ.: **Խառն գնացքը** № 22—3 ժ. 55 ր. գիշ.: **Արագ գնացքը** № 6—11 ժ. 8 ր. առ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստատար գնացքը** № 4Д./3—7 ժ. 21 ր. եր.: **Խառն գնացքը** № 26/27 (IV կարգի վագոններով)—4 ժ. 41 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 18/17—8 ժ. 28 ր. առ.: **Մարդատար** (Կարսից) **գնացքը** № 16|15—6 ժ. 58 ր. առ.:

ԲՈՐԺՈՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—10 ժ. 28 ր. եր.: **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ 25 ր. առ.:

ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿ.
Լոյս տեսան մանկական գրադարանի
1) Ս. Տէր-Աւետիքեանի պատկերազարդ պատմուածք ,,Բուտօնը" գինն է 25 կ.
2) Գրիմմ եղբ. պատկերազարդ ,,Հէքիաթները" պրակ I գինն է 25 կ., պր. II գինն է 25 կ.։
Թարգմ. Յովհ. Թումանեանի։
Վաճառվում է Թիֆլիսի բոլոր հայ գրախանութներում։ Պահեստը Ընկ. մօտ՝ Тифлисъ, Кавказское Армянское Издательское Общество. Абасъ-Абадская пл. № 7.
(օ. մ.) 569. 5—1

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՓՈԽԱԴՐՎԱԾ նոր բնակարան Սոլոլակում Բէբուտովսկայա փող. № 38.
Ներքին և երեխաների հիւանդ., մասնագէտ ստամոքսային եւ աղիքային հիւանդ.։ Էլեքտրօթէրապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։
Տէլէֆօն № 388.
(ա. օ.) 112. 100—85

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ ՎԵՐՋԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ
Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
ՌՈՒՍ-ՀԱՅ (գինը 8 ր., կազմած 9 ր.) և ՀԱՅ-ՌՈՒՍ (գ. 6 ր. կազմ. 6 ր. 50 կ.) լիակատար բառարանների։
Երկուսը միասին 12 ր.։
Նոյն հեղինակի ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, գ. 50 կ., ՌՈՒՍԵՐԷՆԻ ԻՆՔՆՈՒՍՈՅՑՆԵՐ ա. տարի, գ. 25 կ., բ. տ., գ. 40 կ.։
Դիմել՝ А. Дагбашянцу, Великокняжеская, 69, въ г. Тифлисъ. (15) 568. 2—1

ԲԺԻՇԿ
Ե. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Յունիսի 1-ից ընդունում է հիւանդներին ԱԲԱՍԹՈՒՄԱՆՈՒՄ։ Էլեքտրաբուժական կաբինէտ։ Բժշկութեան ֆիզիկական մեթօդներ։
(Ե. ու. կ.) 400. 100—17

,,Գուտտենբերգ" գրավաճ. վաճառվում են հետևեալ էժանագին հրատարակութիւնները.
«Հայ տպագրութեան 400 և տառերի 1500-ամեայ յօբելեանի յիշատակին», հրատ. բժ. Ա. Բուղդուրեանի.
Փոքրիկ պատմուածքներ (15 պատմուածք) 20 կ.
Գորիլլա և ուրիշ պատմուածք (16 պատմուածք) 20 կ.
Երեք պատմուածք, 98 երես 20 կ.
Կորած սարը ոսկէ կուռքի գանձը (20 պատմուածք) 20 կ.
Դիմել՝ Тифлисъ, книж. маг. «Гуттенбергъ» Г. И. Галустьяну.
(օ մ.) 565. 3-1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՈՒՂԱՐԿՎԵՑ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ
ՆՈՐ-ՀՈՍԱՆՔ
№ 5—մայիս 1914 թ.
(200 մեծադիր էջ)
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ
1) «Մելիք Սէթը»՝ Միք. Մանուէլեան, 2) «Արաքս»՝ (տաճկական աւանդ.) Դ. Դեմիրճեան, 3) «Բաղնիքում»՝ Ռէն, 4) «Աղքատ եմ» ասիր...՝ Լէյլի, 5) «Օրիորդ Մարիամը»՝ Ա. Զօրեան, 6) «Ես գիտեմ»՝ Հրաչեայ, 7) «Կառուցանող Սօլնէսս»՝ (Հէնրիխ Իբսէն) Թարգմ. Յ. Քոչարեան, 8) «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում», 9) «Խ. Աբովեանի կեանքի վերջին տարիները»՝ Ա-Դօ, 10) «Ի. Գ. Ֆիխտէի սօցիալ-փիլիսոփայութիւնը»՝ Վ. Խորէնի, 11) «Աւետիք Արասխանեան»՝ Ա. Տէրտէրեան, 12) ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ—1) Լեօն-Լեռնի՝ «Իմ էսկիզներից»—Մ. Ցար., 2) Նոր գրադարան—Մ. Գօրկի՝ Երկու պատմուածք, Ա. Բօգդանօվ՝ Մարդու և մեքենայի միջև, Կարմիր Մեխակներ Ա. և Բ. պրակ, Սօլովեօվ՝ Հիւանդանոցային դրամարկղներ՝ Յ. Ճերմակ, 3) Ռուս նորագոյն գրողներ՝ Und Doch, 4) Կնուտ Համսուն—Պան՝ Ճ. Ց., 5) Է. դը Ամիչիս—Փոքրիկ հերոսներ՝ Und Doch, 13) ՀԱՅ ԿԵԱՆՔ—Ա. Ղազարեան, ՌՈՒՍ ԿԵԱՆՔ—Ա. Աղամեան, 15) ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ—Ա. Տէր-Պօղոսեան, 16) Գրքեր և պարբերականներ, 17) ՊԱՏԿԵՐՆԵՐ—1) Խ. Աբովեան, 2) Ի. Ֆիխտէ, 3) Սայեաթ-Նովայի մահարձանը, 18) Բովանդակութիւն, 19) ՅԱՒԵԼՈՒԱԾ—Չեզարէ Լոմբրօզօ՝ Հանճար և Ցնորում. իտալ. բնագր. թարգմ. Յ. Ճերմակ, 20) Յայտարարութիւն։
ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է № 6-Ը։
Շարունակվում է 1914 թ. բաժանորդագրութիւնը:
Դրամ և նիւթեր ուղարկել՝ Тифлисъ, Редакція «Норъ-Осанкъ», Сергіевская 14. Արտասահմանից՝ Tiflis (Russie, Caucase) Rédaction de la revue «Nor-Hossank».
(ու չ.) 555. 3—2

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արաբերէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշտօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել:
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ:
Տէլեֆօն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный